# ՆՈՐ ՑԵՐԳԱՐԱՆ

891.99-192
Ս-14

891.99-192
Ն-14

# ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑ ԵՎ ԽՄԲԱԳՐԵՑ
ՄԱՐՏ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

1006
28925
26729

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ★ 1934

1.06.2013

Սր ագրեց Գար. Հակոբյան

Պետհրատի տպարան, Յերևան. Գլավլիտ № 8209 (բ), հրատ. № 6232, պատվեր № 1603, տիրաժ 20.000

NOV 2011

# ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՅԵՎ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՅԵՐԳԵՐ

## ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Ելի՛ր, ով կյանքը անիծել է,
Ով ճորտ է, մերկ է և ստրուկ.
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կռվի յենք մենք ձգտում։
Այս հին աշխարհը կփորենք մենք,
Մինչև հիմքերը — և հետո
Մեր նոր աշխարհը կը շինենք մենք,
Ուր վո՛չ ստրուկ կա, վո՛չ դժգոհ։

Սա՛ յե վե՛րջին կռիվը և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կը փրկե։

Վոչ վոք չի տա մեր փրկությունը,
Վո՛չ խենթ հերոսը, վո՛չ արքան,
Մենք պետք է մեր ազատությունը
Կանենք ձեռքով մեր սեփական։
Վորպեսզի շուտ փըշրենք մեր լուծը
Յեվ հետ խլենք վողջ հողը մեր—
Խրփենք մուրճերը, տանք մեր ուժը
Քանի յերկաթը տաք է դեռ։

Սա յե վերջին կռիվը և պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը աշխարհը կըփրկե։

Ժամն է հասել
Մեր մեծ դատի,
Դեպի պայքար, դեպի մարտ
Չենք վախեցել
Ու չենք վախի
Մութ ուժերից բիրտ, տըմարդ։

Հուժկու բազկով
Դեն շըպրտենք
Անարգ լուծը բռնության
Ցեվ մայր հողի
Կըրծքին մեխենք
Ալ դրոշն ազատության։

Թարգմ. Ալազանի



## ԴՈՒ ԶՈՀ ԳՆԱՑԻՐ

Դու զոհ գընացիր
Կատաղի պայքարում
Ընդդեմ բըռնակալ արյունոտ աշխարհի.
Ցեղար անընկուն
Դու ցարի բանտերում,
Տարար բռնություն ու տանջանք աքսորում։

Ստրուկ կարգերին
Պատերազմ հայտնեցիր,
Բանվոր-գյուղացուն մեծ խորհուրդը տըվիր,
Արծիվ կոմմունար,
Դու Վլադիմիր Իլիչ,
Ընկեր, ղեկավար, դու մեր մեծ ուսուցիչ։

Հյուսիս ու հարավ,
Արևելք, արևմուտք,
Տեսար բարձրունքներն ազատ մարդկության.
Ճընշված ազգերին
Դու տըվիր մի նոր կյանք,
Բացիր ճանապարհ հըզոր Միության։

Ցեվ մենք կընթանանք
Քո գըծած ուղիով
Անվախ, աներկյուղ, համարձակ, անսասան,
Մեռար դու, բայց քո
Գաղափարը անմահ
Ապրում է մեր մեջ և կապրի հավիտյան։

Թարգմ. Մ. Աղայանի



## ԳՈՌ ՄՐՐԻԿՆԵՐԸ

Գոռ մրրիկները վոռնում ու ճաչում են,
Սեվ մութ ուժերը մեզ ժանտ ճընշում,
Գոռ պայքարի մենք յելանք թշնամու դեմ,
Գոռ պայքարի յելանք մենք համարձակ։

Ցեվ կը պարզենք մենք մեր վեհ ալ դըրոշը,
Դրոշը կարմիր՝ մարտընչող բանվորի,
Դրոշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրոշը մեր վառ ու ազատ գալունքի։

Դեպ անողոք մարտ,
Դեպ կատաղի մարտ,
Մարշ, մարշ, հառաջ, բանվոր դասակարգ։

Դահ ու թագին ցարերի նզովք ու զարշանք,
Շըղթայով կաշկանդ. մասսային հարգանք,
Մեր արյունով շաղախված է թագ, է գահ
Գարշ վոսոխի արյունով կողողենք—

Ցեվ կպարզենք մենք մեր ալ դըրոշը,
Դրոշը կարմիր՝ մարտընչող բանվորի,

Դրոշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրոշը մեր վառ ու ազատ գարունքի։

Դեպ անողոք մարտ,
Դեպ կատաղի մարտ,
Մարշ, մարշ, հառաջ, բանվոր դասակարգ։

Թարգմ. Ա. Մինասյանի



## Ե՛Յ ՄԱՐՏԻԿՆԵՐ

Ե՛յ մարտիկներ դուք, ե՛յ տիտաններ դուք.
Ռազմի շեփորն է գիլ շեփորում,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Մեզ արդար դատն է գրոհի կանչում։
Ծանըր մուրճ, ծանըր մուրճ
Քո հարվածը հուր—հրաշունչ.
Թափ, ավյուն մեր սրտում,
Ցե՜լ բանվոր կռվի դու հըզոր։

Փառք Իլիչին մեր, կեցցե կոմմունան.
Կորչի կապանքըն, աքսոր ու բանտ,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Մեր վոխն անհուն է՝ վորոտ ու շանթ։
Ծանըր մուրճ, ծանըր մուրճ...

Բյուր ու հազար ենք, շարքերով կուռ ենք,
Պոռթկում, հորդում ենք հեղեղ հորձանք,
Դեպ բարիկադը, դեպ բարիկադը,
Կորչի խավարը, կեցցե նոր կյանք։
Ծանըր մուրճ, ծանըր մուրճ...

Թարգմ. Ա. Տիգրանյանի

## ԴԵՊԻ ՄԱՐՏ ԴԻՄԵՆՔ

*Դեպի մարտ դիմենք սրտով անվեհեր,*
*Մեծ գործին զոհենք մեր կյանքը․*
*Բարիկադ ելեք, բոլոր ճընշվածներ,*
*Ազատենք գերված աշխատանքը։*

*Հարվածենք խիզախ կամքով աներեր,*
*Վոսոխին մեր, վոր գալիս նենգ ե,*
*Բարիկադ ելեք բոլոր ճընշվածներ,*
*Ազատենք գերված աշխատանքը։*

*Ե՛յ ցարեր, ցարի անարգ ծառաներ,*
*Զուր են ձեր դավերն ու ջանքը,*
*Բարիկադ ելեք, բոլոր ճընշվածներ,*
*Ազատենք գերված աշխատանքը։*

*Դեպի մարտ դիմենք սրտով անվեհեր,*
*Մեծ գործին զոհենք մեր կյանքը․*
*Բարիկադ ելեք, բոլոր ճընշվածներ,*
*Ազատենք գերված աշխատանքը։*

Թարգմ․ Մ․ Աղայանի



1006/28225

## ԾՈՎԵՐԻ, ՍԱՐԵՐԻ ԳՐԿՈՒՄ

*Ծովերի, սարերի գրկում,— Եխ,*
*Հեռու մեր յերկրում․*
*Դարձյալ փողն ե ուժգին հնչում*
*Ու մարտի կանչում։*

*Կարծես նորից պետք ե կռվել — Եխ,*
*Ինչպես քսան թվին՝*
*Մեր սահմանն ե ուզում անցնել*
*Գեներալը հին։*

*Իր հետ ե բերում մեծ բանդա — Եխ,*
*Թնդանոթներով․*
*Ատամաններն են շրջում այնտեղ*
*Սև զորք խմբերով։*

*Շատ անգամ ենք թշնամու հետ — Եխ,*
*Կռվի բռնվել,*
*Շատ անգամ ենք նրան քշել*
*Սահմանը պահել։*

Թնդանոթի վորոտի տակ—մեխ,
Ծիծաղս գրոհ կտանք,
Կպաշտպանենք թե մեր յերկիրը,
Թե մեր աշխատանքը։

Տես փողհարն է կրկին հնչում—մեխ.
Մարտական գրոհ,
Ծովերի սարերի գրկում
Ու մեր ստեպներում։

Խոսք Կովալյով Տիխոնովի
Թարգմ․ Մ․ Միրզոյանի
Երաժշտ․ Մարիան Կովալի



## ՅԵՐԳ ԺՈՂԿՈՄԻ ՅԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հողմը յեթե դաշտում պարի
Քշի ամպերը փոշու,—
Տուր կազակ, տուր մաքուր գարի
Ձիուն քո նըժույգ։

Հյուր է գալիս մի ձիավոր
Դաշտ ու անտառ թռչելով,
Նա յե գալիս, Դոնի բանվոր
Կլիմ Վորոշիլով։

Դեպի հանքերը, մեր կողմը
Ծանոթ վայրեր, լի ձիով
Սլանում է մեր զինկոմը
Կարևոր գործով։

Յեվ ընդառաջ յելան յերգով
Ու դրոշով ծածանող
Մետաղագործ և լեռնագործ
Ընկերներ ծանոթ։

Վողջունում է ահա կրկին
Ջահելներին, ծերերին
Կոմիսարը մեծ բանակի
Մեր ազատ յերկրի։

Խոսում է նա, կոչ է կարդում
Ընկերներին վաղեմի,
Նորից լինել զգաստ, արթուն
Յեվ պատրաստ կռվի։

Աղմկեց բանակը բանվոր,
Անտառի պես ամեհի,
Քեզ հետ, երբ մենք չէյինք վոր
Գրոհում եյինք։

Կամ թե քիչ ենք պարծենում մենք,
Ուսուցումով քո տված,
Քի՞չ ենք զարկել թշնամուն
Նենգ ու ցրել պարտված։

Դու ասա, թշնամուն ասա
Թող մեկ էլ գա հանդիման
Այն, ինչ վոր թողել ենք կիսատ,
Լըրացնենք հիմա։



Հեռվում մեկի յերգը նորից
Հին կռիվներն է հիշում,
Տուր կազակ, տուր զտված գարի
Ձիուն քո նժույգ։

Խոսք Ա. Ժարովի
Թարգմ. Վ. Նորենցի
Յերաժշտ. Ա. Դավիդենկոյի

## ԲՈՒԴՅՈՆՆՈՒ ՀԵԾԵԼԱԶՈՐԸ

Է՜յ, շոգ չինչնես ու կեսօրը
Ջխաշես տապում.
Բուդյոննու հեծելազորը
Ձգվեց սահպում։

Հոր ու մոր պահած բալեք չենք
Աղիզ ու մաղիզ.
Մենք աճել ենք բոցերում շեկ
Վառողի, գազի։

Մենք փառքով մեր հայրական
Զենք հպարտանում.
Ինքներս գիտենք միշտ համարձակ
Ջարդել թշնամուն։

Թող պաները չպարծենան
Ձիերին խաղալով,
Նրանց աղունը մենք կաղանք
Մի գրոհ տալով։

Ցերը վոր խոտերը խշխշան
Թող հիշեն նորից,



Վոր Բուդյոննու զորքն է այն
Գեղջկի, բանվորի։

Կովի պատրաստ ենք մենք սակայն,
Պերեկոպը գիտենք,
Փամփուշտներն առատ են, կան
Նույն թշնամու դեմ։

Վոչ վոք մեր սահմանագծին
Թող չմոտենա,
Է՜յ, Բուդյոննու հեծելազոր
Առաջ, միշտ առաջ։

Խոսք Ն. Ասեյեվի
Թարգմ. Խ. Ռադիոյի
Երաժշտ. Ա. Դավիդենկոյի

# ԿՈՄԻՆՏԵՐՆ

Ցե՛լեք, գործարաններ,
Սեղմենք մեր կուռ շարքեր,
Քայլենք դեպ ահեղ մարտ,
Դեպ մարտ, դուք միշտ անպարտ։
Ստուգեք հրացանները, առեք ճիշտ նշան
Առաջ, պրոլետարներ դեպ մարտ անսասան։
Դեպ մարտ անսասան,
Դեպ մարտ անսասան։

Թոնավ, մութ բանտերում
Տանջվող բյուր ընկերներ
Մենք ձեզ ենք սպասում
Ու հաշվում մեր շարքերում։
Սպիտակ տերորին հարվածենք աներկյուղ,
Վոտքի յեն կանգնել թե քաղաք և թե գյուղ,
Ծարույկ ենք խարկել,
Վառել, բորբոքել։

Կոմինտերնի կանչին
Գրգռված շարքերով,
Պաշտպան Սովետների
Ցելնենք կարմիր դրոշով։



Պատրաստ ենք մարտի, մենք պատրաստ ենք կանչի
Ցերբեք ճակատը չենք մատնի նահանջի,
Պատրաստ ենք կանչի,
Մենք չենք նահանջի։

Լենինիզմն է սփռում
Լույս մեր ճանապարհին,
Ու մահ է սպառնում
Կապիտալի աշխարհին։
Բանվոր դասակարգը կռվում է համառ
Համաշխարհային մեծ Սովետի համար։
Համաշխարհային
Սովետի համար։

Ցելե՛ք, գործարաններ,
Սեղմե՛ք ձեր կուռ շարքեր,
Քայլեք դեպ ահեղ մարտ
Դեպ մարտ դուք միշտ անպարտ։
Ստուգեք հրացանները, առեք ճիշտ նշան։
Առաջ, պրոլետարներ, դեպ մարտ անսասան։
Դեպ մարտ անսասան։
Դեպ մարտ անսասան։

Խոսք Ի. Ֆրենկելի
Թարգմ. Միք. Միրզոյանի
Ցերաժշտ. Գ. Եյսլերի

# ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆ

Հավաքվենք կազմենք կուռ բանակ
Իլիչի ալ դրոշի տակ,
Պատանի ենք մենք համարձակ,
Պատանի յեռուն ու տաք։

Միլիոններ են մեր շարքերը,
Մեզ համար արգելք չկա.
Թե վոր պետք են մեր կյանքերը
Կզոհենք, յերբ տեղը գա։

Մեր ուժերը պինդ, վոնց յերկաթ,
Զգուշացիր ֆաշիստ վոհմակ.
Հեյ, դրոհիր, յելիր բարիկադ,
Կոմսոմոլ դու համարձակ.

Միլիոններ են...

Թող անշեղ սուլի գնդակը,
Թող ճեղքի խավարը խոր,
Կառուցում է մեր բանակը
Կոմունիզմ վառ ու հզոր։

Միլիոններ են...



Լենինյան գլուխը մենք պարզած
Թշնամուն կըտանք հարված.
Պատանի ենք մենք համարձակ,
Պատանի՝ յեռուն ու տաք։
Միլիոններ են...

խոսք Ի. Ֆրենկելի
Յերաժշտ. Մ. կովալի

## ՅԵՐԲ ՄԱՀԱՆՈՒՄ Է ՂԵԿԱՎԱՐԸ

*Յերբ ղեկավարն է մեռնում,*
*Կարծես արեն է մարում.*
*Յերբ ղեկավարն է մեռնում,*
*կարծես արեն է մարում։*
*Վոչ թե արցունք,*
*Այլ ձյան վրա*
*Ցավի կարկուտն է թափվում։*

*Յերբ ղեկավարն է մեռնում,*
*Ամեն մի վայրկյան տագնապ է.*
*Ամբողջ աշխարհն է քո աչքին*
*Սևանում,*
*Ուղիները բոլոր,*
*կարծես թե կապ են։*

*Յերբ ղեկավարն է մեռնում,*
*Բանվոր դասակարգն է թրթռում.*
*Կարմիր դրոշի տակ ընթանում,*
*Լենինը կրկնելով սրտում։*

Խոսք Վ. Կամենսկու
Թարգմ. Վ. Նորենցի
Յերաժշտ. Բ. Շեխտերի



## ԲԱԳՎԻ 26 ԿՈՄՈՒՆԱՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Ով քո մասին չի թախծել շատ,*
*Անխչակույմի սև անապատ.*
*Խիստ է այստեղ ամեն հայացք,*
*Կոմունի ծաղիկն է ընկած։*

*Անապատ, ով ավազը քո*
*Վողողեց նա կարմիր ներկով։*
*Այն գործը մնում է անմահ,*
*Յերբեք չի խամրի այն գործը մեծ,*
*Վորին նվիրվեց Շահումյան,*
*Վորին վոր Ջափարիձեն զո՛հվեց։*
*Ա՜ . . . .*

Խոսք Ն. Ասեյեվի
Թարգմ. Վ. Նորենցի
Յերաժշտ Վ. Բելիի

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ ՅԵՐԳԸ

(լսում ես դոնբաս)

Հսկողության
Մտրակի տակ,
Ահի տակ տուգանքի,-
Հանքագործները պրոլետար
Զրկված են կյանքից։

Հանքահորում
Կամ բանտերում
Փտում են մեռնում,
Միթե լինենք անձնատուր.
Ինչու մենք չառնենք հրացան ու սրեր.
Յելնենք դե,
Ֆաշիզմի դեմ
Կռվի, Կոմինտերնի դրոշի տակ
Վորպես մի բանակ։

Խոսք Ի. Փրենկելի
Թարգմ. Վ. Նորենցի
Յերաժշտ. Միխ. Զուլակի



## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՐԳԸ

Մութ, խավար, սև գործարանից,
Խոր, խոնավ շախտերից,
Մեր քայլերը բանվորական
Մենք ուղղում ենք դեպի կռիվ
Վերջնական։

Կապիտալին հարված տանք ուժգին
Միշտ պատրաստ յեղիր բանվոր
Մարտի պատրաստ.
Ամրացնենք մեր շարքերը կուռ,
Միշտ ամուր։

Մեզ խաղաղ կյանք են միշտ սուլում,
Իսկ ծածուկ կռիվ գլում.
Մահ դահիճ դեմոկրատներին,
Պրոլետար, յեղիր պատրաստ
Ժամկետին։

Կապիտալին հարված տանք ուժգին,
Միշտ պատրաստ յեղիր բանվոր,
Մարտի պատրաստ.
Ամրացնենք մեր շարքերը կուռ,
Միշտ ամուր։

Թարգմ. Միք. Միրզայանի

# ՇՏՈՒՐՄ ՄԱՐՇ

*Առա՛ջ, առա՛ջ, գե՛հ ընկերներ*
*Ելնենք մարտի առաջ,*
*Տեմպեր պլանի տանք գործարանին*
*Մեր ձեռքերից ամրամկան.*

*Անիվները մետաղաձույլ թող դառնան*
*Թող դառնան մեր ուժից.*
*Մենք միլիոն ենք հազար ու բյուր,*
*Սահման չկա մեր կուռ ուժին։*

*Մենք ապրում ենք մի դար անհա*
*Հախուռն, բարդ, վիթխարի,*
*Ու շողում է պողպեն վահան*
*Ելնող ուժը մասսաների։*

*Եվ մենք մանիկն այդ բանակի*
*Մեր ուժը հրահրան,*
*Դրած փողփա հաղթանակին—*
*Ահա յելնում ենք անսասան։*

Խոսք Գ. Գարուշի
Երաժշտ. Կ. Զաքարյանի



# ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՇԱԽՏՅՈՐՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ

*Բանտի գրանիտ պատերը ծեծի՛ր, շախտյոր,*
*Երկրի ներսի շերտերը քանդի՛ր, շախտյոր,*
*Իսկ տանը կինն ու յերեխայք,*
*Նրանց կյանքն է սև, թշվառ, անհմայք,*
*Նրանց սովն է միշտ տանջում*
*Իր սուր ճիրաններում՝*
*Սովից մեռնելն է նրանց սպառնում։*
*Դե՛հ յելի՛ր, զա՛րկ ու զա՛րկ*
*Բլուրգով ջարդիր քո թշնամուն.*
*Ելի՛ր, յելի՛ր, յելի՛ր...*

*Արյունդ է պետք բուրժուին, լսի՛ր, շախտյո՛ր,*
*Զինվում է նա ուժգին միշտ, գիտցի՛ր, շախտյո՛ր.*
*Բայց վրեժն է շախտում տապ արած*
*Ու դուրս կը գա նա կատաղած.*
*Ամբողջ աշխարհը պիտ ծածկի կարմիր հրով,*
*Պիտ ծածկի ըմբոստ յելքի հրով։*
*Դե՛հ յելի՛ր...*

*Կարմրում է արևելքը, նայի՛ր, շախտյո՛ր,*
*Ինտերնացիոնալով յելի՛ր, շախտյո՛ր,*
*Ի մի՝ խմբած ուժերը մեր՝*
*Զարկենք անշեղ ու մահաբեր,*
*Ու թող ճայթի մեր թշնամիների գլխին,*
*Որհասական գրոհը մեր վերջին։*
*Դե յելի՛ր...*

Թարգմ Մ. Միրզոյանի

## ՇԱՉՅՈՒՆ ՈՒ ՊԱՅԹՅՈՒՆ

Շաչուն ու պայթյուն, և՛ որոտ, և՛ կրակ—
Ըմբոստ մարտնչում էր կոմունան.
Վերջին մեր ուժերը, հուժկու գրոհի տակ,
Ընկան փոսերի ճանկն սև մահվան։

Եվ ահա մեր առջև գեներալը դաժան,
Կարդաց նա զազիր իր հրամանը—
«Ջարդված ու պարտված եք՝ մահին եք արժան,
«Փորեք դե հիմա ձեր դամբանը»։

Եվ մենք փորեցինք բահերով ժանգոտ,
Մայր հողն ահա խոր ճեղքել ենք,
Կանգնած ենք, սպասում ենք, ձայնում ենք ցասկոտ՝
«Դե շո՛ւտ կրակեցեք, մենք պատրաստ ենք»։

Դահիճ գեներալը խնդաց ինքնագոհ.
«Ձեր իղձըն արդեն կատարվում է.
«Դուք հող եք տենչել միշտ, ահա ձեզ և հող.
«Իսկ «կյանքն ազատ» երկնքումն է,



—«Ծաղրո՞ւմ ես, լըպիրշ, դահիճ դու դաժան,
Անվրեժ չի՛ մնա մեր արյունը.
Եվ թող մահանանք մենք,—կապրի հավիտյան
Ազատ աշխատանքն ու կոմո՛ւնան։

—«Իսկ դուք ջարեջար յեղբայրներ անգիտակ՝
Ինչո՞ւ չեն դողում ձեր զենքերը,
Թեկուզ և մեռնենք մենք ձեր հուր կրակի տակ,
Բայց չեն ներգովի մեր շըրթունքները։

—«Նշանն շեշտակի, կրակեցեք դուք անահ,
Անհետ թող ցընդի մեր աճյունը.
Կեցցե՛ն խորհուրդները՝ փարոս լուսարձակ,
Գալիք վառ կյանքի՛ն մեր ողջույնը։

Թարգմ. Կ. Շեկոյանի

## ՅԵՐԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

*Մենք դուրս յեկանք մեր շարքերով բազմահազար,*
*Վողողեցինք հեղեղի պես քաղաքը մեծ—*
*Մեր սրտերում հրդեհի պես պայքար յեռաց,*
*Հոկտեմբերն եր, Հոկտեմբերն եր, վոր բռնկվեց,*

*Հորձանք տվինք ու բարձրացանք ծովի նման.*
*Հողմերի պես մենք միշտ հզոր ու վիթխարի,*
*Այնքան դավեր ու կռիվներ յեկան անցան,*
*Ո՞վ կարող է մեր բանակը հաղթահարի։*

*Վորքան կուզեն սև բանակներ թող նորից գան,*
*Ինչքան կուզեն թող վոր մեր դեմ լարեն դավեր—*
*Մենք պատրաստ ենք, ինչքան էլ վոր մեզ սպառնան,*
*Մենք պատրաստ ենք, մենք հզոր ենք, մենք աներեր։*

*Մենք ենք, մենք ենք, ապագայի անպարտ բանակ,*
*Մենք ենք, մենք ենք, վոր ամենից հզոր յելանք—*
*Վաղը նորից կռիվ ու մահ պիտի լինի.*
*Մենք ենք, մենք ենք վերջին անգամ, վոր պիտի գանք։*

Խոսք Վ. Գրիգորյանի
Յերաժշտ. Հ. Վարդանյանի



## ՁԱՐԿ ԹՄԲՈՒԿ

*Զա՛րկ թմբուկ, զա՛րկ թմբուկ,*
*Զանգդ անդուլ, զա՛րկ թմբուկ,*
*Բամբ թնդա ձայնդ թող,*
*Բոմբ դառնա պայթող։*

*Զա՛րկ թմբուկ, զա՛րկ թմբուկ,*
*Վառ խնդումը տար թմբուկ,*
*Թունդ յելնի սիրտը թող մարդու,*
*Միշտ հաղթող, հաղթող։*

*Ո՞վ է դոփում մերոնց հըրե կամքը,*
*Նորն է կոփում միլիոնների ջանքը։*

---

*Զա՛րկ թմբուկ. զա՛րկ, թմբուկ,*
*Զանգդ անդուլ, զա՛րկ թմբուկ,*
*Բամբ թնդա ձայնըդ թող,*
*Բոմբ դառնա պայթող։*

*Զա՛րկ թմբուկ, զա՛րկ թմբուկ,*
*Վառ խնդումը տար թմբուկ,*
*Թունդ յելնի սիրտը թող մարդու*
*Միշտ հաղթող, հաղթող։*

*Հեյ ծածանեք, ձեր դրոշը բարձր*
*Գոռ թնդացրեք մեծ Իլյիչի կանչը։*

Խոսք Ա. Ղուրբանյանի
Յերաժշտ. Մ. Մազմանյանի

## Ծովերով

Լավ հսկիր դու ծովափերը,
Տես մրխտում են անդադար
Թըշնամու զրահանավերը՝
Սահմանում սավառնակն։
        Ծովերով, ծովերով
        Մեր կարմիր նավատորմ,
        Ծովերով. ծովով, ծովով
        Արշավիր հուժկու, հզոր։

Հա՛ կարմիր մեր նավատորմը,
Կերտած կամքովն բանվորի,
Դեմ փոթորկի կանգնած է նա
Շատ դրոշներ կայմերին։
        Ծովերով, ծովերով...

Կոմյերիտ եմ, յես բանվոր եմ,
Բոլորեց իմ քսան տարին,
Ահա արդեն կամավոր եմ,
Նավատորմի նավաստին։
        Ծովերով, ծովերով...

Դե՛ հսկիր դու ծովափերը,
Թշնամին արթուն է, զգաստ,
Թընդացնի թող ծով—ծովերը
Մեր հաղթ կանչը «մի՛շտ պատրաստ»։
        Ծովերով, ծովերով...

Թարգմ. Ալազանի



## Մեծ մրցություն

Ուղին մեր դժվար է
Ու լի խութերով։
Բայց մենք կը հաղթենք արգելքներն ամեն.
Ու չենք նահանջի յերբեք,
Յերբեք չենք լքվի
Ու չենք մատնվի խուճապի։
        Մըրցում են գործարանները
        Տենդովը վերելքի,
        Դառնում են մեքենաները
        Հուժկու թափով, հուժկու թափով։

Մենք կուռ ու կայուն ենք
Ինչպես ճակատում.
Ձուլված են սըրտերն և ուժերն ամեն
Ընդդեմ թըշնամու,
Հանուն նոր կյանքի կառուցման։
        Մըրցում են...

Լարենք մեր ուժերը
Աշխույժ աղմուկով,
Թող միշտ փոթորկեն ֆաբրիկները մեր։
Հպարտ ձայն տանք մենք իրար.—
Ո՞վ, շատ կարտադրի,
Ո՞վ լավ ու թափով կարտադրի.
        Մրցում են...

Խոսք Ա. Ժարովի
Թարգմ. Հ. Հարութ.
Երաժշտ. Վ. Բելիի

## Յես զինվոր եմ

Յես զինվոր եմ կարմիր յերկրի,
Ճակատըս բաց ու հըպարտ.
Հե՜յ, հե՜յ...

Թուրըս կարմիր, կտրուկ ու հաղթ,
Սուր սըվինըս միշտ անպարտ.
Հե՜յ, հե՜յ...

Ճակտիս աստղը հավերժ փայլուն,
Ճամբես լույս է, լույս ուրախ.
Հե՜յ, հե՜յ...

Իմ թիկունքում շարքեր կանգուն,
Միշտ աննըկուն, միշտ անվախ.
Հե՜յ, հե՜յ...

Մեր դըրոշը ծածանվում է
Կապույտներում լայնարձակ.
Հե՜յ, հե՜յ...

Յեվ դիմում ենք առա՜ջ, առա՜ջ—
Դեպի կարմիր հաղթանակ:
Հե՜յ, հե՜յ...

Թարգմ. Գ. Մահարու



## Պատանի թմբկահարը

Հնչում եր ռումբերի վորոտը,
Մենք քայլում եյինք համարձակ,
Առաջ եր շարժվում մեր խմբերը
Սպարտակյան քաջ մարտիկների:

Մեզ հետ եր փոքրիկ թմբկահարը
Կռվում քայլում եր առաջում,
Ուրախ, անբաժան իր թմբուկով
Բոլշևիկյան կրակը կրծքում:

Մեկ անգամ գիշերվա հանգստին
Ուրախ նա մի յերգ եր յերգում,
Բայց թշնամու գնդակի զարկից
Յերգը մինչև վերջ չերգեց:

Թմբկահարը ժպիտը դեմքին
Հանկարծ ընկավ խոնավ գետին,
Լռեց մեր փոքրիկ թմբկահարը
Լռեց և թմբուկը նրա:

Յերբ հնչեն վորոտը ռումբերի,
Կելնենք հաղթական արշավի.
Ընկավ թմբկահարը պատանի,
Բայց յերգը նրա միշտ կապրի:

Թարգմ. Ա. Տանիկ.
Յերաժշտ, Ա. Դավիդենկոյի

## ԻՄ ՄԱՏՐՈՍ ՏՂԱ

*Այսօր, նորից նոր մեր յերակներում*
*Խաղաց արյունը հորդ, հրանման,*
*Իմ ծանոթ ընկեր, ծփուն ծովերում*
*կանգնել ես դու հաղթ պահակի նման։*

*Իմ մատրոս տղա,*
*Իմ սրտո՛տ տղա,*
*Կապույտ ծովերի*
*Փոթորկոտ տղա։*

*Թե լինի, մի օր, թշնամին դաժան՝*
*Յելնի ծովերից չար ու ամարդի*
*Յես գիտեմ՝ կտաս դու ազդանշան —*
*Վերջին պայքարի և վերջին մարտի։*

*Իմ մատրոս տղա,*
*Իմ սրտոտ տղա,*
*Կապույտ ծովերի*
*Փոթորկոտ տղա։*

Խոսք Ս. Տարոնցու
Յերաժշտ. Գ. Միրզոյանի



## ՔԱՅԼԵՐԳ

*Մենք ունենք դրոշ ալ, կարմիր,*
*Ջահ ու վառ, պայծառ է,*
*Թող բռնի նա,—ով ժիր,*
*Ով սրտով կայտառ է։*

*Ձա՛խ, ա՛ջ, ձա՛խ, ա՛ջ,*
*Ով սրտով կայտառ է։*

*Նա թող լինի թմբկահար,*
*Ով ճարպիկ, խիզախ է,*
*Թող թմբուկը զարկի նա,*
*Դե մա՛րշ, ով անվախ է։*

*Ձա՛խ, ա՛ջ, ձա՛խ, ա՛ջ,*
*Դե մա՛րշ, ով անվախ է։*

# ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ՑԵՐԳԵՐ

## ԾԼԵԼ Է ԱՐՏՍ

Ծլել է արտս,
Ծփում է արտս,
Կորել է դարդս, ջա՛ն,
Խնդում զվարթ է,
Բացված նոր վարդ է,
Արտս ազատ է, ջա՛ն։

Կանաչ է դաշտը,
Կորավ չիրաշտը,
Ամառը հաշտ է, ջա՛ն։
Ցեկել է նորը,
Խնդության օրը,
Գյոռալ տրակտորը, ջա՛ն։

Փրկեց մեր ցավը,
Սավետի գալը,
Կապույտ կանալը, ջա՛ն։
Տոլիկս շող է,
Արևի շող է
Տոլիկս նոր է, ջա՛ն։

Կարմիր ծաղիկ է
Ազատ բաղի մեջ
Գիտներ չողերս, ջա՞ն
Նա թափառում է,
Աշխույժ յեռում է,
Ազատ թռչում է, ջա՞ն։

Խոսք Ալազանի
Յերաժշտ. Միք. Միրզոյանի



## ԱՐՏԵՐԸ ԾԼԵԼ ԵՆ

Արտերը ծլել են,
Արտերը կանաչ են,
Արտերը շնչում են,
Արտումը յերգեր կան,
Նրանք ինձ ճանաչ են
Ու բարձր հնչում են։

Արտերը փռվել են,
Անափ ու անծեր են,
Խալու պես բացվել են,
Յերկինքը շաղել են,
Ամպերը անցել են,
Ծիլերը թացվել են։

Արտերը ծովի պես,
Ծիծաղով ծըփում են,
Ծփում են ծովիցը,
Ծըլերը ծարավ են,
Ծըլերը ծըծում են
Ծըծերը հողիցը։

Եվ ամեն մի ծիլը
Մեր յերկրի սրտումը
Ժպտավառ և տաք է.
Հին աշխարհի դեմը,
Մոլեգին մարտումը
Մահացու գնդակ է։

Խոսք Ալ. Վշտունու
Երաժշտ. Տեր-Ղևոնդյանի



## ՄԵՐ ԱՐՏԵՐՈՒՄ

Մեր արտերում, մեր արտերում
Հիմա ինչքան կյանք է յեռում,
Մեր արտերում վոսկե ծփան
Կոլեկտիվ նոր թափն է յեռում։

Բոլշևիկյան հասուն արտում
Հղիացած հասկն է յեռում,
Կուլակի դեմ այս պայքարում
Միլիոնների կամքն է յեռում։

Մեր արտերում կոլխոզական
Թշնամու դեմ մարտ է յեռում,
Ուր կոլխոզնիկ հարվածային
Ձեռքն ու ենտուզիազմն է յեռում։

Հղիացած արտն է յեռում,
Կոլեկտիվ նոր թափն է յեռում,
Կուլակի դեմ այս պայքարում
Միլիոնների կամքն է յեռում։

Երաժշտ. Միք. Միրզոյանի
Թ. Հովհաննիսյանի

## ՄԵՐ ԲԱՄԲԱԿԻ ԱՐՏԵՐԸ

*Մեր բամբակի, մեր բամբակի արտերը*
*Թև են առել, բաց են յեղել վարդերը...*
*Տոնական են մեր դաշտերը բամբակի,*
*Վերջին հարված կհասցնենք կուլակին:*

*Մեր արտերի, մեր արտերի լայնությամբ*
*Կյանք է առնում աշխարհը մեր հոյակապ.*
*Հե՜յ ջան, հե՜յ ջան, այս օրերի խնդությամբ*
*Մենք կերտում ենք վողջ աշխարհի ապագան:*

*Թող գա հույսով, թող գա լույսով բամբակը*
*Մեր աշխարհի արևավառ յերգերով,*
*Մենք թշնամու սրտին կը տանք գնդակը*
*Բանվորական մեր ամրակուռ ձեռքերով:*

Խոսք Ա. Շայրոնի
Երաժշտ. Մ. Մազմանյանի



## ՋԱ՛Ն ԲԱՄԲԱԿ

*Բացվել ես, ջա՛ն, հե՛յ բամբակ,*
*Լցվել ես, ջա՛ն, մե՛ր բամբակ.*
*Ջանաք անենք փաթիլդ,*
*Բարդան անենք քե՛զ, բամբակ:*

*Արի նազուք, ջա՛ն, բամբակ,*
*Մալանչ անեմ, իմ բամբակ,*
*Թելե՛ր—թելե՛ր անելով*
*Քեզ փայփայեմ, մե՛ր բամբակ:*

*Սպիտակ չթեր ու կտավ*
*Քեզնից գործեմ, հե՛յ բամբակ,*
*Գույներ անեմ, վոր խնդա*
*Սիրուն դեմքիդ, մե՛ր բամբակ:*

*Խորհրդային արևը*
*Քեզ կյանք տվեց, իմ բամբակ:*
*Բանվորական թևերը*
*Քեզ բոյ տվին, ջա՛ն բամբակ:*

*Մեր բարեկամ ու ընկեր,*
*Բոլշևիկ ես, մե՛ր բամբակ.*
*Դու մեր կամքով ես յեկել*
*Բացվի՛ր, լցվի՛ր հե՛յ, բամբակ:*

Խոսք Շայրոնի
Երաժշտ. Մազմանյանի

## ԱՇԽԱՐՀՈ՛Վ ՄԵԿ

Էյ, հէյ, ինչքա՛ն արտեր ունենք՝
Աշխարհով մեկ, աշխարհով մեկ,
Ջահել սրտի վարդեր ունենք՝
Աշխարհով մեկ, աշխարհով մեկ։

Արևն յելել սարն է բռնել,
Շողքը կարմիր ճամբեքով մեկ,
Կոլխոզների արտն է բռնել՝
Հանդն ու արտն աշխարհով մեկ։

Տրակտորների ձենն է ընկել
Դաշտերի մեջ՝ աշխարհով մեկ,
Գեղ-գեղովի լի[illegible] ընկեր
Աշխատանքի՝ աշխարհով մեկ։

Առուների ջուրը ես [illegible]
Առատ-առատ դաշտերով մեկ,
Վառ ու պայծառ սրտերը մեր՝
Աշխարհի դեմ, աշխարհով մեկ։

Խոսք Աղ· Վարդանյանի
Երաժշտ. Ռ· Մելիքյանի
Աղ· Մանուկյանի



## ՎԵՐԵԼՔ

Մեր դաշտերում ինչքա՛ն վարդեր,
Ու լալաներ՝ բոլբ, գույնըզգույն,
Վոսկենըման դեղին արտեր,
Թնդուն սըրտեր, վորպես Զանգուն...

Մեր դաշտերում յեռուն հույզեր
Ու մըկաններ՝ պիրկ ու ջլուտ.
Անվերջ յեռանդ, ծիծաղ ու սեր,
Շոգեձիներ՝ կամքին հլու...

Վորպես լույս ելեքտրոլամպի
Լուսավառվող սև խավարում—
Իշխող շունչը կուռ յերկաթի՝
Յերկաթավառ մեր դաշտերում...

Խոսք Հրաչյանի
Երաժշտ. Մ· Մազմանյանի

## ՄԵՐ ԿՈԼԽՈԶԻ ԱՐՏԵՐԸ

*Մեր կոլխոզի արտերը*
*Տրակտորը վարել ա,*
*Կոլխոզն էսօր ծովի պես*
*Կանաչել ա, ծաղկել ա։* | *Կրկնել*

*Մեր կոլխոզի արտերը*
*Նախշուն բերքով հասել ա,*
*Ցորենի ծով հասկերը —*
*Ծոփ բերքերով լցվել ա։* | *Կրկնել*

*Օրորվում են հասկերը*
*Ու բացվել են վարդերը,*
*Հազար երնեկ նոր կյանքին՝*
*Շենացել են դաշտերը։* | *Կրկնել*

Խոսք Ս. Հակոբյանի
Երաժշտ. Տ. Ավետիսյանի
Սպ. Մելիքյանի



## ԿՈԼԽՈԶԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ

*Կոլխոզական պարձ անենք,*
*Անել-ջանել գործ անենք.—*
*Ղվամթ անենք, որ կյանքը*
*Սոցիալիզմի հասցնենք։*

*Հո՛պ դե՜ տվեք մահու հարված կռնակին,*
*Դաշնակների թև ու թիկունք կուլակին.*
*Հո՛պ դե թռե՛ք, ջա՛ն, դե թռեք, դե թռե՛ք,—*
*Ամուր պահենք էս մեր կյանքը թանգագին։*
*Նա՜-նա՜-նա՜յ, նա՜-նա՜-նա՜յ, նա՜-նա՜-նա՜յ...*

*Թառը քարին շարելով,*
*Լե՛ն հողերը վարելով,—*
*Տրակտորով, կոմբայնով,*
*Գրոհում ենք արտերով։*

*Հո՛պ դե՜ տվեք մահու հարված կռնակին,*
*Դաշնակների թև ու թիկունք կուլակին.*
*Հո՛պ դե թռե՛ք, ջա՛ն, դե թռե՛ք, դե թռե՛ք,—*
*Ամուր պահենք էս մեր կյանքը թանգագին։*
*Նա՜-նա՜-նա՜յ, նա՜-նա՜-նա՜յ, նա՜-նա՜-նա՜յ...*

Սոցիալիզմի ճամբին ենք,
Հերոսական թափի՛ յենք.
Մենք լենինյան զենքերով,
Վառ ապագան կտեսնենք։
Հո՛պ դե թուեք և այլն...

Խոսք Ա. Շայբոնի
Երաժշտ Ա. Սաքյանի



## ԿՈԼԽՈԶԱԿԱՆ ՅԵՐԳ

Մեր դաշտերում լեն ու արձակ
Մաշինի կանչն է արշավում,
Տրակտորն է տողեր շարում
Մեր դաշտերում լեն ու արձակ.

Յեվ կոլխոզնիկն է համարձակ
Մկաններն ու կամքը լարում,
Մեր դաշտերում լեն ու արձակ
Մաշինի կանչն է արշավում։

Բորբոքվում է հույզ ու յեռանդ
Մեր արտերում խրոխտականչ,
Կոլխոզնիկի յերգն աննահանջ...
Բորբոքում է հույզ ու յեռանդ։

Ծիծաղում են դաշտեր ու հանդ
Ու ձայնակցում առաջ, առաջ...
Բորբոքվում են հույզ ու յեռանդ
Մեր արտերում խրոխտականչ։

Արշավում են օրերն ահա
Կոլխոզական հուր յեռանդով
Մեր դաշտերով ու մեր հանդով
Արշավում են օրերն ահա։

Կոլխոզնիկի սրտի վրա
Հաղթանակի յերգն է հաղթող.
Արշավում են օրերն ահա
Կոլխոզական հուր յեռանդով։

Խոսք Զ. Մարգարյանի
Յերաժշտ. Ա. Ներսիսյանի



## ԿՈԼԽՈԶԻ ԱՂՋԻԿ

Կանգնել ես հպարտ, կոլխոզի արտում,
Այտերդ ձեռքիդ հասկերի պես վառ.
Ու քո վառ սերդ է ծաղկել իմ սրտում։
Կոլխոզի աղջիկ, աչերդ պայծառ

Հեյ ջան, հեյ ջան, հեյ ջան, հեյ . . .
Ջան ջահել աղջիկ, հաստատ ու համառ,
Վառ յերգեր եմ յես հյուսել քեզ համար։

Մեր ընթացքի հետ այս արագահոս,
Անվախ քայլում ես դու մեզ հետ առաջ.
Դարձել ես մեր նոր օրերի հերոս,
Կոլխոզի աղջիկ՝ և՛ արի, և՛ քաջ։

Հեյ ջան . . . . .

Մի անհուն սիրով յես քեզ սիրեցի
Ծփան արտերի վոսկեվառ գրկում.
Անունդ այնպես պայծառ գրեցի
Կոլխոզի աղջիկ, իմ սիրո գրքում,

Հեյ ջան . . . . .

Խոսք Մ. Կորյունի
Յերաժշտ. Դ. Ղազարյանի

## ՄԵՐ ՏՐԱԿՏՈՐԸ

Մեր տրակտորը շորորալէն,
Յարս եշխով նստած վրէն,
Հողի սիրտը խոր կը փորի,
Խաղ կանչելով, ջա՜ն, վար կանի։

Յա՜ր, վար արա, ջա՜ն, վար արա,
Տեսնի դուշմանն ու քոռանա։

Հավերն անուշ ճնկճնկալէն,
Ջավերն անուշ մեր հանդերէն
Յարիս դեմքը կը գուրգուրէն,
Անուշ ձենը ինձ կը բերէն։

Յա՜ր, վար արա .......

Ծաղկոտ սարին, վարած հանդին,
Գյոզալ յարս նստած վրէն՝
Մեր տրակտորը գյուղ կմտնի,
Յարս եշխով խաղ կը կանչի

Յա՜ր, վար արա .......

Խոսք Ա· Շատվորյանի
Երաժշտ· Դ· Ղազարյանի



## ՄԵՆՔ ՔԱՐՏԱՇ ԵՆՔ

Մենք քարտաշ ենք, քար ենք տաշում
Մուրճի հարվածով կերտում, կերտում
Սոցիալիզմի քարն ենք տաշում,
Խորհրդային մեր յերկրում,
Մեր յերկրում Խորհրդային,
Մեր յերկրում, հե՜յ։

Տաշած քարը պինդ լեռ քար է,
Չի փշրվի նա յերբեք, յերբեք,
Սոցիալիզմի հիմքն ենք դնում
Չի քանդվի նա յերբեք,
Նա յերբեք չի քանդվի,
Նա յերբեք, հե՜յ։

Խոսք Հ· Հովհաննիսյանի
Երաժշտ· Տ· Ավետիսյանի

## ՁԵՐ ԹԱՓԸ

*Աշխատանքով հարվածային*
*Ու ձեր կամքով անվեհեր—*
*Տալիս եք դուք անխիղճներին*
*Բոլշևիկյան նոր տեմպեր, նոր տեմպեր։*

*Ցեխ գրոհի այս օրերում,*
*Վորպես մի-մի հերոսներ,*
*Ձեր հաղթական յերթն է անցնում,*
*Ձգվում դեպի դագգյաններ, դագգյաններ։*

*Ձեր նոր թափի հատու յերգով*
*Պատվում են անիծներ,*
*Գործում անվերջ, առույգ թափով,*
*Առավոտից մինչ գիշեր, մինչ գիշեր։*

Խոսք Ֆերիի
Ցերածշտ. Վ. Տիգրանյանի



## ՄԵՐ ԹԱՓԸ

*Հարվածային յեռանդով վառ,*
*Վորպես խիզախ մարտիկներ,*
*Այս պայքարում դուռ ու համառ*
*Մարտնչում ենք անհրեր։*

*Աշխատանքով հարվածային*
*Ու մեր կամքով անվեհեր,*
*Տալիս ենք մենք անխիղճներին*
*Բոլշևիկյան նոր տեմպեր։*

Ցերաժշտ. Խ. Կուշնարյանի

## ՈՐԵՐԻ ՅԵՐԳԸ

Կույր են նրանք, վոր չեն տեսնում
Վերելքը մեր այսքան խոշոր—
Մեր տեմպերը բոլշևիկյան,
Վոր աճում են ամեն մի որ...

Հազար սրտեր յերգն է հուզել
Այս որերում մեր պայքարի.
Հազար ձեռքեր յերկաթակուռ
Շենքն են շարում կոմունայի...

Այս որերի յերգը հիմա
Բոլշևիկյան նոր թափ ունի.
Պայքարների բովից անցած՝
Բոլշևիկյան նոր տեմպ ունի։

Խոսէ Նաքայրի
Յերաժշտ. Ա. Սարյանի



## ԻՆՉՔԱՆ ԽԻՆԴ ԿԱ

Ինչքա՜ն խինդ կա իմ սրտում,
Կյանքի թափ կա իմ սրտում,
Յես ջահել եմ յեռանդուն՝
Արև՛ աշխարհ իմ սրտում։

Յարս ինձ հետ բանվոր է—
Արև ունի իմ սրտում,
Յարս կարմիր զինվոր է—
Նրա հուրն է իմ սրտում։

Ինչքա՜ն խինդ կա իմ սրտում
Կյանքի թափ կա իմ սրտում,
Յես ջահել եմ, յեռանդուն՝
Արև-աշխարհ իմ սրտում։

Յերաժշտ. Ռ. Մելիքյանի

## ՇԻՐԿԱՆԱԼԸ

*Մատաղ լինեմ յես այն օրին, մատաղ լինեմ յես այն ժամին*
*Յերբ ինձ նորից կվիճակվի այցի գալու Շիրկանալին.*
*Տեսա նրա յերկունքը յես, պեղումները տարի առաջ,*
*Այժմ՝ նրա բաղ ու բաղչեն, արտն ու հանդը, ծառ ու կանաչ*
*Վիլլանների թավուտ անտառ, ծառուղիներ, ծաղկանոցներ*
*Վորոնց բույրից կզգա նորից ջահելություն իմ հոգին ծեր.*
*Յեվ գիշերը հազարաչյա՝ տարածելով լույսի փեշեր,*
*Ինձ կերեվա հեռու տեղից մի աստղազարդ, հեքիաթ գիշեր.*
*Յեվ կտուրեն ֆաբրիկների գուդոկները ուրախ կանչով,*
*Վողջունելով գյուղ ու քաղաք՝ ալ բոցերի հուր ճաճանչով։*
*Բոլշևիկ է Շիրկանալը, մեծ զավակը Հայաստանի,*
*Նրա վորդին՝ ջահը ձեռքին, լույսի աղբյուր մի տիտանի։*

Խոսք Հակոբ Հակոբյանի
Յերաժշտ. Արմեն Տիգրանյանի



## ԿԱՐԲԻԴԻ ՅԵՐԳԸ

*Վորքա՜ն հուրեր, վորքա՜ն վիժանուտ*
*Վարսեր կրակի—ոդը ալիքող։*
*Այդ արև՞ն է արդյոք այդպես թեժանում*
*Իր ծիրանահանդ ու տոկուն յերգով։*

*Թե՞ բաբախում է այնտեղ ջառաչուն—*
*Աշխատանքային մեր յերկրի սիրտը։*
*Մարմնավորվում է այնպես հարաճուն*
*Յերկաթավորվող յերգերն ու խինդը։*

*Վորքա՜ն հուրեր, վորքա՜ն վիժանուտ*
*Վարսեր կրակի— ոդը ալիքող,*
*—Սոցիալիստական հուրն է թեժանում*
*ԵՒ հաղթանակում յերկաթե յերգով։*

Խոսք Ալազանի
Յերաժշտ. Ս. Բարխուդարյանի

## ԵՐԳ ԿԱՌՈՒՑՄԱՆ

*Քարը՝ քարի,*
*Դարը՝ դարի,*
*Ո՞ւր ենք հասել հիմա մենք.*
*Մեծ պայքարի*
*Վոգով արի,*
*Դարն ենք կերտում հիմա մենք։*

*Ցեղիր անահ,*
*Մոռացիր մահ*
*Կառուցման մեծ ճակատում,*
*Լսիր, ահա*
*Ճամբիդ վրա*
*Նոր արևներ են ժպտում։*

*Քարը՝ քարի,*
*Կամքով արի*
*կառուցում ենք կյանքը մեր,*
*Նոր աշխարհի*
*Լույսը վառի,*
*Ի՛մ բարեկամ, իմ ընկեր։*

*Ցեղիր առկուն,*
*Թող քո հոգում*
*Հույսը յերբեք չմարի.*
*Ձեռքիդ դրած*
*Քո մի քարը*
*Հավասար է մի դարի։*

Խոսք Գ. Սարյանի
Երաժշտ. Ա. Ներսիսյանի



## ՈՒՍ—ՈՒՍԻ

*Ուս ուսի, ուս ուսի,*
*Քար քարին, շար շարին,*
*Քաղցըր բեռ մեր ուսին—*
*Շարիր, շարիր, շարիր...*

*Ձեռք ձեռքի, ձեռք ձեռքի,*
*Լար լարին, շար շարին,*
*Սիրտ սրտի, յերգ յերգի—*
*Շարիր, շարիր, շարիր...*

*Ու նորից՝ ուս ուսի,*
*Քար քարին, շար շարին,*
*Քաղցըր բեռ մեր ուսին—*
*Շարիր, շարիր, շարիր...*

Խոսք Գ. Մահարու
Երաժշտ. Ռ. Մելիքյանի, Մ. Միրզոյանի

## Անմար Մնա

Անմար մնա մեր գլխին
Խորհրդային արևը,
Նրա պայծառ կրակը
Մեր սրտերում հավետ է։

Մեր գյուղերը կեղեքված
Սովետն յեկավ ազատեց,
Մեր արտերին չորացած,
Սովետն յեկավ ջուր տվեց։

Ջրանցքների մեր յերկրում
Թող սովետը բոյ քաշի,
Նրա կարմիր ծոցի մեջ
Կոմսոմոլը կանաչի։

Կարմիր աստղ ճակատին,
Անհաղթ մնա սովետը,
Նրա կարմիր կրակը
Մեր սրտերում հավետ է։

Խոսք Ալազանի
Յերաժշտ. Ա. Սաթյանի



## ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՅԵՐԳԵՐԻՑ

Լույսը բացվեց, դնամ հանդը,
Կանաչել են սարն ու արտը.
Էն տրակտոր քշող տղան
Ինձ է կանչում, մեռնեմ նրան։

Արևի հետ զարթնել է նա.
Զնգզնգում է յերգը նրա.
Էն կոմսոմոլ ջահել տղան,
Ջա՜ն, իմ յարն է, մեռնեմ նրան։

Հասակն ասես սոսի լինի,
Գիշերից սև աչքեր ունի.
Գարունից էլ սիրուն տղան
Գերել է ինձ, մեռնեմ նրան։

Լույսը բացվեց, դնամ հանդը,
Կանաչել են սարն ու արտը։
Էն տրակտոր քշող տղան
Ինձ է կանչում մեռնեմ, նրան։

Խոսք Վ. Աղայանի
Յերաժշտ. Մ. Մազմանյանի
Խ. Թոռչյանի

## Բանակ Գնաց

Սիրած տղես մի կաղնի ծառ՝
Նոր կարմիր բանակ գնաց.
Ինքն՛ խելոք, ինքն՛ պայծառ, ]
Վոնց վոր սրած դանակ գնաց։ ] Կրկնել

Մոսին պիտի ձեռքը առնի
Հաստատ կռնով, ամուր մեջքով
Գրանիցը մեր պաշտպանի՝
Թշնամու դեմ արթուն աչքով.

Մենք կոլխոզը կմեծացնենք,
Բոլ մաշինա կառնենք գեղին,
Թե հարկ լինի, յես էլ մի որ
Կերթամ—հասնեմ են լավ տղին։

Կարիճ տղես մի կաղնի ծառ՝
Նոր կարմիր բանակ գնաց,
Ինքն՛ խելոք, ինքն՛ պայծառ,
Վոնց վոր սրած դանակ գնաց։

Խոսք Սողոմոն Տարոնցու.
Յերաժշտ. Միք. Միրզոյանի
Թ. Հովհաննիսյանի



## Յես Նուռ Եմ

Յես նուռ եմ, սիրով հուռ եմ,
Ջահել տղին մըրմուռ եմ,
Արագի պես լավ կըտամ,
Սեր ու սովդա կըվառեմ։

Ա՛յ տըղա, հանդ ես գնում,
Կոլեկտիվ արտ ես գնում,
Կեպին թեքել ես ճակտիդ,
Ինչպես հպարտ ես գընում։

Տրակտորը քըշում ես,
Մըրգով լիքը աշուն ես,
Աչքով-ունքով ես անում,
Սիրտ ու հոգիս մաշում ես։

Նոր ինձ յար ես դառել,
Կուլակին քար ես դառել,
Կոլեկտիվի ուժիցը
Գյուղի մեջ սար ես դառել։

Համ խելոք ես, համ դոլ ես,
Մի ակտիվ կոմսոմոլ ես,
Կոլեկտիվըդ չեն մնա,
Սիրով ու սուփրով բոլ ես։

Խոսք Սողոմոն Տարոնցու.
Գուրգեն Միրզոյանի
Յերաժշտ. Ռ. Մելիքյանի
Գ Բաբայանի

## ԱԴՐԲԵՅՋԱՆ

Ջա՜ն,
Ադրբեյջա՜ն,
Եյ ջա՜ն,
Իգի՜թ ես հիմի,
Ջահե՛լ։
Վառել ես
Բյուրամոմ ջահեր,
Վառել ես
Շող,
Շեմս—արեվ
Ջա՜ն,
Ադրբեյջա՛ն,
Եյ ջա՜ն,
Սարահ խե՛յր,
Սալա՛մ
Բարե՛վ,
Ջա՜ն։
Պարզել ես
Բազուկդ կուռ
Դեպի
Քերբելա,



Մեքքա
Բանտում ես
Ալլահը ծեր,
Քանդում ես
Մինարա,
Մզկիթ...
Ջա՜ն,
Ադրբեյջա՛ն,
Եյ ջա՜ն,
Սարահ խե՛յր,
Սալա՜մ,
Բարե՜վ
Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն։

Խոսք Ազ. Վշտունու
Երաժշտ. Ա. Տեր-Ղևոնդյանի

# ՆՈՐ ՅԵՐԳԸ

*Սիրո՜ւն աղջիկ, ո՞ւմն ես սիրում աշխարհում,*
*Սովետական ես մեր սիրուն աշխարհում,*
*—Քաղքից յեկած են տղին եմ յես սիրում,*
*Կեպի դրած են տղին եմ յես սիրում։*
*Աչքերը շող են տղին եմ յես սիրում,*
*Մաշին քշող են տղին եմ յես սիրում։*

*Ընչի՞ համար դու չես սիրում են տղին,*
*Բոյը սիրուն, տեսքը սիրուն են տղին.*
*Հոնքը կիտած, բեխը սրած են տղին,*
*Գլխին սև՛ սև փափախ դրած են տղին,*
*Մաուզերը կողքին կախած են տղին,*
*Մեր հանդերից հեռու փախած են տղին։*

*Ընչի՞ սիրեմ բեխերը ցից են տղին,*
*Հողը դնեմ աշխարհի ցեց են տղին,*
*Ձեռքը տաուզ, խելքը տաուզ են տղին,*
*Թալան տվող լիրբ ու հարուստ են տղին,*
*Մաուզերին ձեռքը դրած են տղին,*
*Ռանչպարի շիվան ու լաց են տղին։*

Խոսք Զարենցի
Յերաժշտ.՝ Սպ. Մելիքյանի
Միք. Միրզոյանի



# ՆՈՐԵԿ ԳԵՂՋԿՈՒՀԻ

*Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի,*
*Գարունդ է յեկել, տանից դուրս արի.*
*Արևը կարմիր կապել է կամար,*
*Կարմիր որեր է բերել քեզ համար։*

*Դաշտերը կարմիր, լայն ու ընդարձակ,*
*Կանչում են, ընկեր, յեղիր համարձակ.*
*Ըըրի՞ պես ուժեղ, Թըրի պես կըտրուկ,*
*Հին կույր կըրոնին մի՛ լինի ստրուկ։*

*Քանդի՛ր հին գյուղը—բանտը սև ու մութ.*
*Նորության համար յեղիր լուսամուտ,*
*Նորը հնի դեմ հանիր պայքարի,*
*Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի։*

Խոսք Ար. Խնկոյանի
Յերաժշտ. Ռոմ. Մելիքյանի
Տեղ. Ավետիսյանի

## Որորոցի Երգ

Ննջի՛ր, մանկի՛կ իմ,
Ննջիր հանդարտ,
Որը հանդիստ է,
Որը խաղաղ։

Հայրըդ գալու չէ
Երկու տարուց,
Գնաց յերկրին մեր
Պարտքը տալու։

Մեծացի՛ր դու էլ,
Արև՛ իմ նոր,
Դարձիր հզոր և
Կարմիր զինվոր։

Բայց յերբ լինես դու
Քսան տարու,
Կերգե յերկրում ես
Ուրիշ գարուն։

Ուրիշ հասմիկներ
Կծաղկեն վառ,
Քեզ չի հասնի էլ
Վոչ մի խավար։



Կչինի հինը
Վաղուց քանդված,
Ննջի՛ր, մանկի՛կ իմ,
Ննջի՛ր հանդարտ…

Ննջի՛ր, մանկի՛կ իմ,
Որն է մթնում,
Այսոր հանդիստ քեզ,
Վաղը՝ խնդում։

Լուսինն է խոսում
Հասկերի հետ,
Դաշտում հոսում է
Լուսաջուր գետ։

Լինի վարար թող
Բախտը քո նոր,
Ծովի նման ու
Ծովի պես խոր։

Հայրըդ գալու չէ
Երկու տարուց,
Գնաց յերկրին մեր
Պարտքը տալու.

Խոսք Ի. Մախարու
Երաժշտ. Գեղարիկի

## ԳՅՈՒՐՋԻ ԱՂՋԻԿ

Գյուրջստանի մարմալ աղջիկ, քեզ ինչպես յերգեմ,
Յերգս սիրտ մի գութան չե, վոր սիրտդ հերկեմ,
Վոր սիրտ հուր սերմեր ցանեմ, ծաղիկներ բուսնեն,
Սրտիդ բույրով, մարմալ աղջիկ, իմ սիրտը սնեմ։

Գյուրջի աղջիկ, յես քեզ տեսա սովխոզի արտում,
Վոսկե հատիկ լազութի պես ժպտում եյիր դու.
Կիտել եյիր շեղջը բերքիդ՝ լազութը դեղին,
Կանչում եյիր ձայնով յերգիդ՝ քո սիրած տղին։

Համբուրել եր արևը շեկ այտերդ մարմար,
Աշխատում ես, գյուրջի աղջիկ, մեծ գործի համար.
Յեվ ժպտում եր հոգիդ վճիտ ու դեմքդ վառման,
Ջեր սովխոզի արտի միջի լազութի նման։

Խոսք Գ. Սարյանի
Յերաժշտ. Դ. Ղազարյանի



## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՐՈՒՆ

Գարունն ես ինչ սիրուն ե,
Իմ յերգը վարարուն ե,
Կյանքը վորքա՜ն խնդուն ե
—Ջա՜ն, խորհրդային գարուն։

Գույներով հազար-հազար
Բացվել են ծաղիկ ու վարդ,
Ծաղկել ես կանանչազարդ,
—Ջա՜ն, խորհրդային գարուն։

Նման դաշտերը հովի
Ալիքանման ծովի,
Արտերդ ջինջ ու մովի
—Ջա՜ն, խորհրդային գարուն։

Կապտի միջին լողում են,
Լյուսերը շողշողում են,
Ամեն տեղ վողողում են,
—Ջան խորհրդային գարուն։

Վորքան նոր-նոր են ծլում,
Դիմացը հինն ե մեռնում,
Կյանքը այսպես ե հոսում,
—Ջա՜ն, խորհրդային գարուն։

Խոսք Վ. Բզնունու
Յերաժշտ. Դ. Ղազարյանի

## ՄԱՇԻՆԵՆ ՔԱՇԵԼ ԵՄ ՎԱՐԻ

*Մաշինեն քաշել եմ վարի,*
*Կոլեկտիվ հողերում ածնիր,*
*Տողե՛ր ջան, ուշացար, ո՞ւր ես,*
*Յե՛կ, ջանս, յե՛կ, նազ մի՛ անի։*

*Հե՛յ ջա՛ն, հե՛յ ջա՛ն, տրակտո՛ր վարի,*
*Տողերըս դուրս յեկավ հանդից.*
*Պողպատե ընկերս, վարի՛,*
*Վա՛ր անենք շուտ, դո՛ւրս գանք հանդից։*

*Տողերիս աչքերը մթին,*
*Տողերիս ունքերը լուսին,*
*Տողե՛ր ջան, յեկ բռնենք եշխով,*
*Կոլեկտիվ նոր կյանքի ուղին։*

Յերաժշտ. Ս. Մանուկյանի



## ՏՐԱԿՏՈՐ

*Հե՛յ, ջան, տրակտո՛ր ջան,*
*Քեզ է ձնում մեր դաշտը,*
*Կոլխոզի բանվոր վաշտը,*
*Յե՛լ մեր արտերը վարի,*
*Բամբակ ցանենք էս տարի։*

*Մեր կոլխոզը նո՛ր է, նո՛ր,*
*Բոյ է քաշում որեցոր,*
*Ունենք յերկաթե տրակտոր,*
*Գյուղից քշենք կուլակին,*
*Առաջ քաշենք բատրակին։*

Խոսք յեվ Յերաժշտ. Մխ. Միրզոյանի

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ

## ՔԵԼԵՐ, ՑՈԼԵՐ

*Քելեր, ցոլեր՝ իմ յարը,*
*Արեվի տակին*
*Քելեր, ցոլեր՝ իմ յարը.*
*Սարի սովոր,*
*Մեն մենավոր,*
*Ծե՛կ տըղա,*
*Ծո՛ղ արեգակ,*
*Թո՛ղ արեգակ,*
*Ցե՛կ, տըղա։*

*Քելեր, ցոլեր՝ իմ յարը,*
*Աղբյուրի տակին*
*Քելեր, ցոլեր՝ իմ յարը.*
*Կանաչ տավով,*
*Ճանաչ տավով,*
*Ցե՛կ, տըղա,*
*Բաղովն արի,*
*Ծաղովն արի,*
*Ծե՛կ տըղա։*

Քելեր, ցոլեր՝ իմ յարը
Գերանդին ուսին
Քելեր, ցոլեր՝ իմ յարը՝
Հով ծառի տակ,
Զով ծառի տակ,
Ցե՛կ, տըղա,
Հունձ եմ արել,
Քրտինք դառել,
Շե՛կ տըղա։

Քելեր, ցոլեր՝ իմ յարը,
Ջա՜ն աչքի լուսին,
Քելեր ցոլեր իմ յարը.
Հով է, քընի՛ր,
Զով է, քընի՛ր,
Շե՛կ տըղա,
Հունձ եմ արել,
Շատ բեզարել,
Շե՛կ տըղա։

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ՔԵԼԵ, ՔԵԼԵ

Քե՛լե, քե՛լե, քելքիդ մեռնեմ.
Քո գովական խելքիդ մեռնեմ,
Սիրավոր լորիկ,
Վիրավոր լորիկ,
Լորի՛կ,
Սեվավոր լորիկ,
Լորիկ ջան։

Քե՛լե, քե՛լե, սոյիդ մեռնեմ.
Քո չինարի բոյիդ մեռնեմ։

Քե՛լե, քե՛լե, քողիդ մեռնեմ.
Քո լուսընկա շողիդ մեռնեմ։

Քե՛լե, քե՛լե, բերնիդ մեռնեմ.
Քո սիրունիկ ձենիդ մեռնեմ։

Քե՛լե, քե՛լե, ձեռիդ մեռնեմ.
Քո հուր կըրակ սերիդ մեռնեմ։

Քե՛լե, քե՛լե, աչքիդ մեռնեմ.
Քո անուշիկ պաչիդ մեռնեմ։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԵՍ ԱՌՈՒՆ

Ես առուն ջուր է գալի,
Մի տեսեք ո՞ւր է գալի
Քենին մահանա արել,
Իր յարին հյուր է գալի.
Գալիս է, գալիս է, սեր անե։

Վարդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դրել շաղերով.
Արի՛, իմ սիրեկան յար,
Առաջ գամ քեզ տաղերով։

Տանըս տակին կա նըռնի
Յես բարձ բերեմ դու կըռնի՛,
Յես-դու մի բաղում պիտենք,
Դու չինարի, յես՝ նըռնի։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի



## ԳԱՐՈՒՆ Ա

Գարուն ա, ձուն ա արել,
Վա՜յ, լե, լե, վա՜յ, լե, լե,
Վա՜յ, լե, լե, լե, լե,

Իմ յարն ինձնից ա սառել։
Ա՜խ, չորնա՛, վա՜խ, ա՜յ յար
Ջար մարդու լեզուն։

Բամին փչում ա պաղ պաղ,
Լերդ ու թոքս անում ա դաղ։

Յա՜ր, ինձ բեմուրադ արիր,
Սիրըդ ինձնե զատ արիր։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի

## ՀԱԲՐԲԱՆ

Տղա. Հա՛բըրբա՜ն։
Աղջիկ. Ջա՜նե ջա՜ն։

Տղա. Սիրել եմ՝ սերն յերեսին,
Անթառամ թերն յերեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տա,
Աստըծու կերն յերեսին։

Աղջիկ. Հա՛բըրբա՜ն։
Տղա. Ջա՜նե ջա՜ն։

Աղջիկ. Սարի թըրթընջուկ թաղա,
Մեղր ու շաքար քեզ մաղա
Ինձ պես նազան աղջիկը
Քեզ պես տըղին վո՞նց սաղա։

Տղա. Պըստի՛կ աղջիկ, համ ունիս,
Ջորեք դիմաց ծամ ունիս,
Ծունջիկ-մունջիկ մի՛ անի,
Ինձ առնելու կամ ունիս։



Աղջիկ. Գութանդ հոլա՛, հոլա՛,
Գութանիդ տակը քոլ ա.
Քանի դժություն անես,
Քեզի առնողը տոլ ա,

Տղա. Ձեր տան տակին վար կանեմ
Ձար ագուալին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գժությունըս թարկ կանեմ։

Աղջիկ. Ջուրը իր համբով կերթա.
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիչ տըղեն
Հազարի մեջ մի բերդ ա։

Տղա. Բուսել ես բաղի միջին.
Շամամի թաղի միջին.
Գիշեր-ցերեկ միալար,
Դու յես իմ խաղի միջին։

Աղջիկ. Աշուղի պես խա՛ղ տաս,
Բլբուլի պես տա՛ղ տաս.
Ինչքան վոր գովես՝ արժեմ,
Իմ մոր գովական փեսա։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԿԱՔԱՎԻ ՅԵՐԳԸ

Արեվ բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թըռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն։
Սիրունի՛կ, սիրունիկ,
Սիրունի՛կ, նախշուն կաքավիկ։

Քու բուն հյուսած ծաղիկներով—
Շուշան, նարգիզ, նունուֆարով.
Քու տեղ լցված ցող ու շաղով,
Քընես—կելնես յերգ ու տաղով։
Սիրունի՛կ, յեվ այլն։

Քու թեվ փափուկ ու խատուտիկ,
Պըղտիկ կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով
Կը շորորաս ճուտիկներով։
Սիրունի՛նկ և այլն։

Յերբ կը կայնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին, —
Սարեր-ձորեր ըրվարթ կանես,
Դարդի ծովեն սիրտ կը հանես։
Սիրունիկ և այլն։

Խոսք Հովհ. Թումանյանի
Յերաժշտ. մշ. Կոմիտասի



## ՋԻՆԱՐ ԵՍ

Ջինար ես կեռանալ մի,
Յա՛ր, Յա՛ր,
Մեր դռնեն հեռանալ մի,
Յա՛ր, յա՛ր,
Յար, քո աստված կը սիրես,
Յա՛ր, յա՛ր՝
Հեռու յես, մոռանա՛լ մի։
Յա՛ր, յա՛ր,
Յա՛ր, նա նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
նա նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ;

Ձեր բաղի դուռը բաց ա,
Վոտներըս շաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես,
Աչքերըս լիքը լաց ա։

Ես գիշեր յերազ տեսա,
Հեշկերըս վարած տեսա.
Ամո՛թ քեզի, ա՛յ տղըա,
Քու յարը տարած տեսա։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի

## ԱԼԱԳՅԱԶ

Ալագյազ սարն ամպել ա,
Վա՜յ, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜, լե՜.
Աղբեր իր ձին թամբել ա։
Իմ մա՜յրիկ, ջա՜ն, իմ մա՜յրիկ, ջա՜ն։

Աղբեր իր ձին թամբել ա,
Ցարոջ դըռնեն անցել ա։

Ցարոջ դըռնեն անցել ա,
Ցելն դաշտը խաղցել ա։

Ցելն դաշտը՝ խաղցել ա,
Անձրև յեկե, թըրջել ա։

Անձրև յեկե, թըրջել ա,
Արև գալկե՝ չորցել ա։

Արև գալկե՝ չորցել ա,
Բան կարմիր վարդ բացել ա։

Կոմիտասի
Երաժշտ. մշ. Գր. Սյունիի



## ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր դըռանը խընկի ծառ,
Գյուլո՛ւմ ջան,
Ձեր դըռանը խընկի ծառ.
Գյուլո՛ւմ ջան.
Խընկնենին ա բերել բար,
Գյուլո՛ւմ ջան.
Իմ խորոտիկ, պըզդիկ յար։
Գյուլո՛ւմ ջան։

Մեր դըռանը խընկի ծառ,
Նախշուն բըլբուլ վըրեն թառ
Ցերթար ու գար, շորոր տար,
Սիրուն յարին որոր տար։

Մեր դըռանը խընկի ծա՛ռ,
Մարջան բըլբուլ վըրեն թառ.
Գընար ու գար, շըվին տար,
Անուշ յարին թևին տար։

Մեր դըռանը խընկի ծառ,
Վոսկի բըլբուլ վըրեն թառ.
Կարմիր խընձոր անել տար,
Ալվան ծաղիկ տանել տար։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԿՈՒԺՆ ԱՌԱ

*Կուժն առա, ելա սարը,*
*Ջը գըտա սիրած յարը,*
*Սիրած յարը ինձ տըվեք,*
*Ջը քաշեմ ահ ու զարը։*

*Մեծ սարի հովին մեռնեմ,*
*Շեկ աղի բոյին մեռնեմ,*
*Մի տարի ա չեմ տեսել,–*
*Տեսնողի աչքին մեռնեմ։*

*Բըլբուլը ղարի վրա,*
*Խնձորը սարի վրա,*
*Սիրած սիրածի տային՝*
*Ջոր գետնին՝ քարի վըրա։*

Ձեռագրտ. մշ. Կոմիտասի



## ՑԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է

*Ցերկինքըն ամպել է,*
*Ի՞նչ անուշ թոն է.*
*Գամ գըռնեն անցնեմ՝*
*Հոգյակըս հոն է։*

*Ցերկինքըն ամպել է,*
*Գետինը թաց է.*
*Յարըս քընել է,*
*Ցերեսը բաց է։*

*Ցերկինքըն ամպել է,*
*Ի՞նչ անուշ յերակ.*
*Սըրտիս մեջ լըցված*
*Մի բուռը կըրակ։*

*Ցերկինքըն ամպել է,*
*Գետին շաղերով.*
*Ցես քեզ սիրել եմ*
*Անուշ խաղերով։*

*Ցերկինքըն ամպել է,*
*Գետինը մութ է.*
*Ցես քեզ ուզել եմ*
*Թո՛ղ ասեն՝ սուտ է։*

*Շորո՜ր դու, շեկլիկ յար*
*Տեսնեմ՝ դու ո՞ւմն ես.*
*Իրավ եմ ասում՝*
*Դու իմ սըրտումն ես։*

Ձեռագրտ. մշ. Կոմիտասի

## ՉԵՄ ԿՐՆԱ

Չեմ, չեմ, չեմ կրնա խաղա,
Վարդ կոշիկըս կը ճաքա,
Անոթի փորս կը գոռա,
Կեսուրս կուգա կը վռնա։

Չեմ, չեմ, չեմ կրնա խաղա,
Սևասուգ սիրտս կը դողդողա.
Լացից աչքըս կը մռմռա,
Չար կեսուրըս կը բըբըռա։

Չեմ, չեմ, չեմ կրնա խաղա,
Ջահել-ջիվան դոշիս դաղ ա.
Լաչառ տալըս կը ճղճըղա,
Տեքրակինըս կը բղբըղա։

Չեմ, չեմ, չեմ կրնա խաղա,
Թավթառ յարըս կըծու սոխ ա,
Ի՞նչ եղավ քեզ, ա՛յ չեկ տըղա,
Ես քո սիրուց հալ մաշ եղա։

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ՎԱՐԴ ԿՈՇԻԿՍ

Վարդ կոշիկըս, վարդ կոշիկըս,
Վարդից գեղեցիկ մաշիկըս։
—Մեր տան մեջը քընող տըղա՝
Կարմիր խընձոր բաշխող տըղա,
Վարդ կոշիկըս գըտնող տըղա,
Տըղա, ղըկե վարդ կոշիկըս։

Վարդ կոշիկըս, վարդ կոշիկըս,
Վարդից գեղեցիկ մաշիկըս։

—Ձեր տան մեջը քընել չեմ յես,
Կարմիր խընձոր բաշխել չեմ յես,
Վարդ կոշիկըդ գտել չեմ յես,
Իմ մոտըս չե վարդ կոշիկըդ։

Վարդ կոշիկըդ, վարդ կոշիկըդ,
Վարդից գեղեցիկ մաշիկըդ։

—Լավ որըս յեղավ ախ ու վախ,
Կորուցի կոշիկըս, ավա՜ղ,
Ջահել տըղա, հոգուս մատաղ,
Տըղա՛, ղըրկե վարդ կոշիկըս։

Վարդ կոշիկըս, վարդ կոշիկըս
Վարդից գեղեցիկ մաշիկըս։

—Ինչո՞ւ կանես դու ախ ու վախ,
Սիրուն աղջիկ, հոգուտ մատաղ,
Թե կըլինիս ինձ սիրեկան,
Ես կըճարեմ վարդ կոշիկըդ։

Վարդ կոշիկըդ, վարդ կոշիկըդ,
Վարդից գեղեցիկ մաշիկըդ։

Երաժշտ. մշ. Կարա-Մուրզայի



# Արի Մանան

Արի Մանան, արի, գընանք մեր տունը,
Քեզի տեսա, կըտրավ աչքերիս քունը,—ջա՛ն.
Ջա՛ն Մանան ջա՛ն,
Ջա՛ն Ջանան ջա՛ն, ջան։

Մանան սարեն կուգա, շալկինը ժախ է,
Վոսկեթել մազերը թիկունքին կախ է,—ջան.
Ջա՛ն Մանան ջան,
Ջա՛ն Ջանան ջա՛ն, ջան։

Երկինքը ամպել է, գետինը թաց է
Մանանի թիկունքը կիսեն հետ բաց է,—ջան.
Ջա՛ն Մանան ջան,
Ջա՛ն Ջանան ջա՛ն, ջա՛ն։

Երաժշտ. մշ. Ռոմ. Մելիքյանի

# ՀՈ՛Յ ՆԱԶԱՆ ԻՄ

*Հո՜յ, Նազանըմ, Նազանըմ,*
*Գյուլ Նազանըմ, Նազանըմ,*
*Ցար ջան, դու բարով յեկար,*
*Կանաչ ձորերով յեկար,*
*Կարմիր սոլերով յեկար։*

*Աղջի՛, մազերդ թուխ է,*
*Ես ի՞նչ բարութի մուխ է,*
*Մուխ անողը քոռանա,*
*Ինձի-քեզի մոռանա։*
*Ցար ջան, դու բարով յեկար...*

*Մեխակի ծառ եմ տընկել,*
*Քեզ համար հիվանդ ընկել,*
*Ոխտը տարի տեղումըս,*
*Ցես մի կըջտի յեմ պառկել։*
*Ցար ջան, դու բարով յեկար...*

*Գյուլըս գյուլլում է դառել,*
*Ցարըս լեյլում է դառել,*
*Վո՞նց անեմ վոր հասկանաք՝*
*Մի հատ գուլում է դառել։*
*Ցար ջան, դու բարով յեկար...*



*Սիրել եմ սերն յերեսին,*
*Ռեհան թերն յերեսին,*
*Ով իմ սիրածն ինձ չտա,*
*Թող ընկնի կերն յերեսին։*
*Ցար ջան, դու բարով յեկար...*

Կարա-Մուրզայի
Ցերաժշտ մշ. Կոմիտասի
Գր· Սյունեիի

## ԱԼԱԳՅԱԶ

*Ալագյազ բարձր սար է,*
*Ձե՛ յաման, ո՜ յար ջան,*
*Ձյունն է կիտել կատարին,*
*Ձե՛ յաման, ո՜ յար ջան։*

*Մակիկ ավեք են վըշէն,*
*Ձե՛ յաման. ո՛ յար ջան՝*
*Վոտը դրել է փըշին,*
*Ձե՛ յաման, ո՜ յար ջան։*

*Ա՜յ իմ Թառլան, Թեվ տուր ինձ,*
*Ձե՛ յաման, ո՜ յար ջան.*
*Թռչեմ հասնեմ իմ յարին,*
*Ձե՛ յաման, ո՜ յար ջան։*

Տեքստը ժող. մշ.
Հով. Հովհաննիսյանի



## ՔՅՈՒՐԴԱՆ ԿԶԻ

*Քյուրդան կըզի կայնե խաղա, լեյ-լե, աջե,*
*Քյուրդան կըզի ծամ կը սանրե.* » »
*Քյուրդան կըզի դեղ կը դնե,* » »
*Քյուրդան կըզի գոտի կապե·* » »
*Քյուրդան կըզի խմոր կանե,* » »
*Քյուրդան կըզի գըրդնակ կանե* » »
*Քյուրդան կըզի թախտ կը ավլե* » »
*Քյուրդան կըզի բուրդ կըգըզե* » »
*Քյուրդան կըզի լվածք կանե.* » »

## ԾԱՄԹԵԼ

— Իմ գըլխու փաթեն կիտամ,
Դե խանա ծամթե՛լն ի ծովեն։
— Լողվորի մեկլե յես եմ,
Չե՛մ խանա՛ ծամթե՛լն ի ծովեն։

Յա՜ր ունիմ, յա՜ր ունիմ,
Յարիս յոթն ախպեր ունի.
Յա՜ր ունիմ, յա՜ր ունիմ,
Յոթն էլ գացած բանելու.
Յա՜ր ունիմ յա՜ր ունիմ,
Նախըրատեղին ուռի ծառ.
Յա՜ր ունիմ, յա՜ր ունիմ,
Խընձոր թալեմ արի տար.

— Իմ գըլխու չամբար կիտամ,
Դե խանա ծամթե՛լն ի ծովեն։
— Լողվորի մեկլե յես եմ,
Չե՛մ խանա ծամթելն ի ծովեն։
— Իմ խաքի շապիկ կիտամ,
Դե խանա՛ ծամթելն ի ծովեն։
— Լողվորի մեկլե յես եմ
Չե՛մ խանա ծամթելն ի ծովեն։
— Իմ դոշի սըրտնոց կիտամ,
Դե խանա ծամթելն ի ծովեն։
— Լողվորի մեկլե յես եմ,
Չե՛մ խանա ծամթելն ի ծովեն։

Յա՜ր ունիմ, յա՜ր ունիմ,
Յարըս յոթն ախպեր...



— Իմ թևի թևնոց կիտամ,
— Իմ վըզի վըզնոց կիտամ,
— Իմ յերսի ճըթիկ կիտամ,
— Իմ սերուսի ծամեր կիտամ,
— Իմ մեյդան ճակատ կիտամ,
— Իմ կամար ունքեր կիտամ,
— Իմ ֆինջան աչեր կիտամ,
— Իմ մեղրիկ բերան կիտամ,
— Իմ թոլոր յերես կիտամ,
— Իմ շարմաղ ձեռներ կիտամ,
— Իմ սիվտակ դոշ քե կիտամ,
— Իմ բոյըն ու բուսս կիտամ,
— Իմ ծամի ծանրութենեն
Ծամթելս կըտրե, ընկե ի ծով
Իմ ծամթելն խան տո՛ւր ի գլխ,
Քու ջանել արեն արով։
— Իմ ջուխտակ աչխս վրա,
Ծամթելն խանեմ իտամ քըզի,
Յերբ կիտա (ն) ըն որն յերկինք,
Որ երնեկ իտան մըզի։

Յա՜ր ունիմ, յա՜ր ունիմ,
Յարըս յոթն ախպեր...,

Կոմիտասի
Երաժշտ, մշ. Ռ. Մելիքյանի
Սպ. Մելիքյանի

## ՀՈՎ ԱՐԵՔ

Հով արեք, սարե՛ր ջան, հո՛վ արեք,
Իմ դարդին դարման արեք։—
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զով արեք.
Վարար անձրև թափեք,ծով արեք,
Գեշ մարդու որ-արևը
Սև հողի տակով արեք։

Հո՛վ արեք, ամպե՛ր ջան, հո՛վ արեք,
Իմ դարդին դարման արեք։—
Ամպերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր, ջրե՛ր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբյուրներ,
Մի վեր կացեք, իմացե՛ք,
Տեսեք իմ սրտի ցավեր։

Հո՛վ արեք, սարե՛ր ջան, հո՛վ արեք,
Իմ դարդին դարման արեք։—
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ԹԸԽ ԿՈՆԴԱ

Թը՛խ կոնդա, դըլեն Թը՛խ կոնդա, ափոն Թը՛խ կոնդա,
Բաղի բիլբուլ, սուսան սըմբուլը կոնդա,
Գընացի սարը սնձի,
Վոտքըս դիպավ մեկ քընձի.
Ափո՛ն կոնդա, դու մի՛ կոնդա, Թը՛խ կոնդա։

Գեծը միրուքըդ խանձի, դըլեն Թը՛խ կոնդա,
Ծըռար, չը տըվիր ընձի, դըլեն Թը՛խ կոնդա,
Գընացիր սարըշ սընձի,
Վոտքըդ դիպավ մեկ քընձի,
Ափո՛ն կոնդա, դու մի կոնդա, Թը՛խ կոնդա։

Երաժշտ. մշ. Ս. Մելիքյանի

## ՄԱՆԴՐԻԿ Թ ՓԻԿ ԸՌԵՀԱՆ

Մանդըրիկ Թըփիկ ըռեհան,
Ելնինք սարերը սեյրան.

Հոպը՛ռ, հոպերով գյադա,
Քաշվի՛, ելողլու գյադա։

Ա՛յ աղա, ո՞ւր ես, ո՞ւր ես,
Յես ծարավ եմ, դու ջուր ես.

Հոպը՛ռ...

Մանի ըսեմ ու չարեմ,
Լըցնեմ տոպրակն ու կարեմ.

Հոպը՛ռ...

Առնեմ իջնեմ Երևան,
Անուշկիս յարըմ ճարեմ,

Հոպը՛ռ...

Ներաժշտ. մշ. Սպ. Մելիքյանի



## ԿԱՑՆԵԼ ԵՍ.

Կայնել ես, կանչում ել չես,
Յա՛ր,
Բոյեդ ամանչում ել չես,
Յա՛ր-նայ, նայ, նայ, նայ, նայ,—
Նայ, նայ, նայ նայ նայ, նայ.
Ենկար կըշտովս անց կացա՛ր,
Յա՛ր,
Տեր ես, ճանանչում ել չես
Յա՛ր։
Յար—նայ, նայ, նայ, նայ, նայ,
Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ։
Սև ամպը սարի գլխին,
Կաքավը, քարի գլխին.
Ջե՞ իրար խոսք են տըվել
Են բարձր դարի գլխին։
Գը՛նա՛. գընա՛, հետիդ եմ
կարմիր խնձոր գոտիդ եմ.
Դու ինձ հատեղ չես թողնի.
Վորտեղ յերթաս մոտիդ եմ։

Ներաժշտ. մշ. Կոմիտասի

# Սար, սար

Սա՜ր, սա՜ր,
Ցես սարերի ծաղիկն եմ.
Ջա՜ն, ջա՜ն
Ցես Լեվոնի քուրիկն եմ։

Են սարին սար չեմ ասի,
Փիս դյաղին յար չեմ ասի։
Ինձ չեր առնում, թող չառներ.
Խոսք ու զըրից՝ ել ի՞նչ եր։

Հաց եմ թըխել փըռփըռի,
Վատ խոսողը քըրքըրի։
Ցես սարերի ծաղիկն եմ,
Ցես Լեվոնի քուրիկն եմ։

Երաժշտ. մշ. Կոմիտասի



# ՄԱՏՆԻՔԸ ՄԱՏՈՎՍ ՉԵՐ

Մատնիքը մատովս չեր,
Ա՜խ.
Սիրածը սրտովըս չեր։
Ա՜խ։

Վա՜ լե, լե, լե՜, լե՜։
Վայ, լե, լե, լե՜, լե։

Դերձիկ, մատներդ կոտրի,
Մինթանեն բոյովըս չեր։

Զարգյա՜ր, թևերդ կոտրի,
Քամարը մեջքովըս չեր։

Սիրածի հերը մեռնի,
Սիրածը սըրտովըս չեր։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՆԱՑ

*Սարերի վըրով գընաց,*
*Յա՜ր, յա՜ր.*
*Արոտով, արոտով,*
*Յարիս կարոտով:*

*Իմ յարը խըռով գընաց,*
*Յա՜ր, յա՜ր,*
*Մընացիր, մընացիր,*
*Ջինվոր գընացիր:*

*Վոչ լոր էլավ վոչ կաքավ,*
*Յա՜ր, յա՜ր,*
*Արոտով, արոտով,*
*Յարիս կարոտով:*

*Ձեռնես թըռնելով գընաց.*
*Յա՜ր, յա՜ր,*
*Մընացիր, մընացիր,*
*Ջինվոր գնացիր:*

*Ծաղիկ էր հոտով-մոտով,*
*Յեկավ, անցավ իմ մոտով.*
*Աչքըս տեսավ՝ սիրեցի*
*Ու մընացի կարոտով:*

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ԵՍ ԳԻՇԵՐ ԼՈՒՍԸ ՏԵՍԱ

*Ես գիշեր լուսը տեսա,*
*Յերի, յերի, յերի ջա՜ն.*
*Իմ յարը դուսը տեսա,*
*Յերի, մարալո՛ ջեյրան.*
*Յելել էր ուխտ էր գալի,*
*Յերի, յերի, յերի ջա՜ն.*
*Հրացանը ուսը տեսա,*
*Յերի, մարալո՛ ջեյրան:*

*Արևը սարի վըրա,*
*Մամուռը քարի վըրա.*
*Յես վոսկե սարք պիտեյի,*
*Իմ սիրած յարի վըրա:*

*Էն, սարեն մարդ ա գալի,*
*Սարը կըրակ ա տալի,*
*Առաջըս աղլուխ բացավ,*
*Իմացա վարդ ա տալի:*

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԼՈՒՍՆԱԿՆ Ա ԿԱՅՆԵԼ ԴԱՐԻՆ

*Լուսնակն ա կայնել դարին,*
*Յա՜ր, աման,*
*Ա՛ղջի, դու սիրուն,*
*Ջա՛նե, ջա՜ն,*
*Նրնակ քու տիրուն.*
*Պատկերն ա քու պատկերին,*
*Յա՜ր, աման,*
*Ա՛ղջի քու քելքը,*
*Ջա՛նե, ջա՜ն.*
*Տարավ իմ խելքը։*

*Լո՛ւսնակ ջան, շուտ մի՛ յերթա,*
*Յա՜ր, աման,*
*Ա՛ղջի, դու սիրուն,*
*Ջանե, ջա՛ն.*
*Նրնեկ քու տիրուն.*
*Զուր մեկել գալող տարին։*
*Յա՛ր, աման.*
*Աղջի քու քելքը,*
*Ջա՛նե, ջա՛ն.*
*Տարավ իմ խելքը։*



*Լուսնակը ցոլաց, գընաց,*
*Դեմ առավ ամպին՝ մընաց.*
*Սըրտով պայման չը տըվավ,*
*Սըրտիս դաղ եղավ, մընաց։*

*Լուսնակը պահ ա մըտել,*
*Անուշ յարը չեմ գըտել.*
*Աչքըս արցունքով լըցված,*
*Գիշերը քուն չեմ մըտել։*

*Գիշերը քուն չեմ մըտել,*
*Քեզ յերազումըս գըտել.*
*Քեզանից ձեռ չեմ վերցնի,*
*Քանի սաղ եմ, չեմ փըտել։*

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԻՄ ՉԻՆԱՐԻ ՅԱՐԸ

*Արևը թըռվըռում ելավ,*
Ի՜մ չինարի յարը,
*Մեր բանը կըռվով ելավ,*
Դարդիմա՜ն յարը.
*Թըշնամու վարդին մեռնի,*
Ի՜մ չինարի յարը,
*Իրա չար սըրտով ելավ:*
Դարդիմա՜ն յարը,

Ի՜մ չինարի յարը,
Ի՜մ չինարի յարը.
Ի՜մ չինարի յարը,
Գովակա՜ն յարը:

*Ծըրարը վառա, վառա,*
*Հոր հետ վատամարդ դառա,*
*Մեր ու աղբեր թող ըլլի,*
*Ես իմ սիրածին առա:*

*Բարակի ծերին կանչի՜,*
*Թո՛ղ թշնամին ամանչի.*
*Արևի՛դ մեռնեմ, յա՛ր ջան,*
*Չինարի պես կանանչի՜:*

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

*Լուսնակն անուշ, հովն անուշ,*
վա՜յ, լե, լե՜, լե, լե,.
վա՜, լո, լո՜, լո, լո.
*Շինականի քունն անուշ:*
Երնեկ են օրեր,
վոր կելնենք սարեր:
*Ծագեց լուսնակ յերկընուց.*
*Հովըվի փողն եր անուշ:*
*Հոտաղն յեզներ կարածա,*
*Մաճկալ պառկեր՝ քունն անուշ:*
*Զըղզըղում քամին կըփըչե,*
*Ծովային հովն եր անուշ:*
*Դաշտեր, ձորեր մընջեր են,*
*Ջըրեր գըլգլան՝ ձենն անուշ:*
*Հավքեր թառան իրենց բուն,*
*Բըլբուլի տաղն եր անուշ,*
*Անմահական հոտ բուրեր,*
*Բաֆուր վարդի հոտն անուշ:*

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԱՐԱԶԸ ՀԵՇՏԱՑԵԼ Ա

Արազը հեշտացել ա,
Յա՛ր,
Ճամբեքը կուշտացել ա,
Յա՛ր,
Խարա՛բ տարեք իմ յարին
Յա՛ր,
Անողըս շատացել ա,
Յա՛ր:

Իմ սերը սուր ա դառել,
Կըրակ ու ջուր ա դառել.
Յա՛ր, քեզ սըրտով սիրելը
Ինձ թուք ու մուր ա դառել:

Նրի՛ դալն եմ իմացել,
Աչքըս ճամբիդ մընացել.
Քեզ համար գիշեր, ցերեկ
Միտք անելով եմ կացել:

Բախտը զարկեց սըրտիս նետ,
Արտասունքըս եկավ գետ.
Թե արեվըդ կըսիրես,
Յա՛ր, արի—տար ինձ քեզ հետ:

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ

Անձրևն եկավ շաղալեն,
Ուռու տերև դողալեն.
Վա՛յ, լե, լե, լե՛, լե՛, լե,
Լե, լե՛, լե՛, լե, լե՛,
Հըրես եկավ իմ աղբեր,
Ալ ձին տակին խաղալեն:
Վա՛յ, լե, լե, լե՛, լե՛, լե՛,
Լե, լե՛, լե՛, լե, լե՛:

Խալիչեքը փըռել եմ,
Նախշուն բարձեր դըրել եմ.
Թաղլան ջան, քեզ ուտելու
Սեր, կարագ հացըրել եմ:

Տապկած հավի ճուտ բերեմ,
Վոչխարի մածուն բերեմ.
Վոր գիտենաս, անո՛ւշ ջան,
Թե քեզ սըրտով կըսիրեմ:

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԵՍ ԳԻՇԵՐ, ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ

*Ես գիշեր, լուսնակ գիշեր,*
Վա՜յ, լե, լե, լե՜, լե՜, լե,
լե, լե՜, լե՜, լե, լե՜.
*Ձյունն եկեր, գետին նախշեր,*
Ո՞վ է տեսել՝ սիրած յարը մոռանա.
Ով մոռանա՝ յերկու աչքով կուրանա.
*Աչքըդ գնմ արա՝ պաչեմ*
Վա՜յ, լե, լե, լե՜, լե՜, լե,
լե, լե՜, լե՜, լե, լե՜.
*Կեռ ունքեր, կարմիր թշեր.*
Ո՞վ է տեսել՝ սիրած յարը մոռանա.
Ով մոռանա՝ յերկու աչքով կուրանա։

*Ա՜յ գիշեր, դարձիր տարի,*
*Հացըս թող չինի գարի.*
*Մենակ յարըս ինձ համար*
*Սըրտով խոսքը կատարի։*

*Ա՜ղջի, քու չարը տանեմ,*
*Քու սիրուդ ինձ կսպանեմ*
*Դու իմ խոսքին ականջ դիր,*
*Յես մորըդ հավան կանեմ։*

Յերաժիշտ. մշ. Կոմիտասի



## ԱՌՆԵՄ, ԵՐԹԱՄ ԵՆ ՍԱՐԸ

Առնեմ, երթամ են սարը,
Առնեմ, երթամ են սարը,
Առնեմ, երթամ են սարը,
Սեր անելով իմ յարը։

*Վրան եմ զարկել դարին.*
*Պայման եմ դրել տարին.*
*Տարին թող գա, լըրանա,*
*Հետը բերի իր բարին։*
Առնեմ երթամ յեվ այլն։

*Հենց որ ծաղկի արեւ,*
*Քեզի ղըկեմ բարեւ.*
*Իմանամ դու իմ յարն ես,*
*Առնեմ, յելնեմ վերեւ։*

*Քարի տակին պաղ աղբյուր,*
*Արծաթի թաս, վոսկի ջուր.*
*Յես կըվառիմ քո սիրուն,*
*Մի թաս ուզեմ, յերկուս տուր։*

Յերաժշտ. Կոմիտասի

## ԳԱՐՈՒՆ Ա, ՋՈՒՆ Ա ԱՐԵԼ

*Գարուն ա, ձուն ա արել,*
Վա՜յ լե, լե, վա՜յ, լե, լե,
վա՜յ, լե, լե, լե, լե՜.
*Իմ յարն ինձնից ա սառել։*
Ա՜խ, չորանա՛, վա՜խ, ա՜յ յար,
չար մարդու լեզուն։

*Քամին փչում ա պաղ-պաղ,*
*Լերդ ու թոքս անում ա դաղ։*

*Ցա՜ր, ինձ բեմուրա՞տ արիր,—*
*Սերըդ ինձնե զատ արիր։*

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ՅԵՍ ՍԱՐԵՆ ԿՈՒ ԳՅԱՅԻ

*Յես սարեն կու գայի,*
*Դուն դուռը բացիր.*
*Ջեռըդ ծոցըդ տարար,*
*Ա՜խ արիր, լացիր։*

Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վառվում եմ
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, հալվում եմ,
Հալվում, վառվում, եմ։

*Յես մի կոշտ պաղ էյի,*
*Դու մըրմուռ լացիր.*
*Քո հրեղեն արցունքով*
*Ինձի հալեցիր։*

*Յես մի չոր ծառ էյի,*
*Դու՝ գարնան արև.*
*Քո սիրով ծաղկեցավ*
*Իմ ճյուղն ու տերև։*

*Թե ինձ չէյիր առնի,*
*Ինչու՞ սիրեցիր,*
*Մի բուռ կըրակ դառաք,*
*Սիրտըս էրեցիր։*

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԵՍՈՐ ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Հո՜, յամա՛ն ու յա՛ր ջան,
Ջե՜, յաման ու մարջան։
Եսոր նորը նորել է,
Հո՜ յամա՛ն ու յա՛ր ջան,
Նորել է՝ բոլորել է.
Ջե՜, յամա՛ն ու մարջան.
Յա՜ր, քո լուսնակ երեսից
Հո՜, յաման ու յար ջան,
Իմ սիրտը մոլորել է,
Ջե՜ յա՛ման ու մարջան։

Քան լուսի՜նն ամպի տակով՝
Դու ջուր կերթաս գորակով.
Հոգիս քեզ մատաղ լինի,
Սիրտըս կերես կըրակով։

Ջուրն իմ տան տակից բըխար,
Երված սիրտըս լըվանար,
Յա՜ր, քու այրված խոցերը
Քո ձեռներով լավանար։

Կոմիտասի
Երաժշտ. մշ. Ան. Տեր-Ղեվոնդյանի



## ԳԱՑԻ ԱՐՏԵՐ

Գացի արտեր, բըռնի՛ լոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր.
Նըման էր կարմիր խընձոր։
Լոռի՛կ, գարնան ճարերը
Դու վարդ արիր, լո՛րիկ
Նման էր կարմիր խընձոր:
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ
Լո՛րիկ, գարնան ճարերը
Դու վարդ արիր, լո՛րիկ։

Արև դիպավ սարերուն,
Կաքավ թռավ քարերուն,
Լորիկ կայնե վեր դարուն։

Ջուր կուգա գոչգոչալեն,
Գըլխուդ ես գըցե վալեն,
Լո՛ր, չես հարցնե իմ հալեն։

Քար մի՛ թալի մեր դըշին,
Թող գա նըստի քու թըշին,
Կըրակ տաւ ղարիբ փըշին։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ՇՈՂԵՐ ՋԱՆ

Ամպել ա, ձուն չի գալի,
Շողե՜ր ջան,
Սարերը տուն չի գալի.
Շողե՜ր ջան.
Դու շորորա, դուն օրորա՛
Շողե՜ր ջան,
Ամպի տակին ձուն կերեվա.
Շողե՜ր ջան։

Սիրտըս կըրակով լըցված,
Շողե՜ր ջան,
Աչքերիս քուն չի գալի
Շողե՜ր ջան.
Դու շորորա, դուն օրորա՛,
Շողե՜ր ջան,
Ամպի տակին ձուն կերեվա,
Շողե՜ր ջան։

Հու՜ք ա թափում վերիցը,
Ցես վա՛ռա քո սերիցը.
Վարդավառին ինձ համար
Ջուն բեր դու սարերիցը։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի



## ԿԱՅՆԵԼ ԵՄ՝ ԳԱԼ ՉԵՄ ԿԱՐՈՂ

Կայնել եմ՝ գալ չեմ կարող,
Լցվել եմ՝ լալ չեմ կարող.
Քանի վոր գընացել ես,
Յա՜ր ջան,
Անունըդ տալ չեմ կարող։

Աչքերըս ճամբիդ մնաց,
Խելքըս ինձանից գընաց.
Քո սիրուն, իմ գըլխի տեր,
Ցոթն ու մընացի քնած։

Լալվարա ջուրը սառն ա,
Ռասպությունը դառն ա.
Տո՛ւնըդ դարձիր, իմ ազբեր,
Բոլորքըս պըստիկ դառն ա։

Յերաժշտ. մշ. Ան. Տեր-Ղևոնդյանի

## ԱՄՊԵԼ Ա, ՁՅՈՒՆ ՉԻ ԳԱԼԻ

Ամպել ա, ձյուն չի գալի,
Մըթնելա տուն չի՛ գալի.—
Հեռու ճանապարհի յես,
Աչքերիս քուն չի գալի։

Կանչում եմ, կանչում եմ, յա՛ր, արի, յա՛ր,
Մութն ընկավ, տո՛ւն արի, անջիգյա՛ր յար։

Ես գիշեր կանցնի դըժվար,
Կերթա բարակ ու յերկար.
Իմ որ ախով ու վախով,
Քոնըդ ի՞նչպես կանցնի, յա՛ր։

Ձորերըս ի վեր հանդեր ա,
Ջուրը տունըս քանդեր ա.
Շուտ արա, յետ դարձիր, յեկ,—
Սիրածըդ տանն անտեր ա։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի



## ՅԵՍ ԱՂՋԻԿ ԵՄ

Յես աղջիկ եմ, հեր չունիմ՝
Վա՜յ լե, լե, լե՜, լե, լե, լե՜, լե, լե, լե՜,
Մի սըրտացավ տեր չունիմ.
Վա՜յ, լո, լո, լո՜, լո, լո, լո՜, լո, լո, լո՜,
Հորից մորից զըրկըված՝
Վա՜յ, լե, լի, լե՜, լե, լե, լե՜, լե, լե, լե՜,
Աշխատող աղբեր չունիմ։
Վա՜յ, լո, լո, լո՜, լո, լո, լո՜, լո, լո, լո՜

Ղարիբ հավքը քուն չունի,
Վորբ աղջիկը տուն չունի.
Ինձ նըման սև բախտը
Աշխարհքումըս ի՞նչ ունի։

Ծագեց արևը սարեն,
Կանչեց կաքավը քարեն.
Սիրածըս եկա ինձ տըվեք,
Լավանա սըրտիս յարեն։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի
Սպ. Մելիքյանի

## ՍԱՓՈՐՆ ՈՒՍԻՍ ԴՐԻ

Սափորն ուսիս դրի,
Ջա՜ն, յարո՜, ջան.
Յերթամ աղբյուրը ջրի։
Ջա՜ն, յարո՜, ջան.
Ինչ փուշ գա իմ ոտքը
Ջա՜ն, յարո՜, ջան.
Չար մարդու սրտովը խրվի
Ջա՜ն. յարո՜ ջան, ջա՜ն յարո՜, ջան.
Յես սիրեցի, յես առա։

Արևը մերը մտավ,
Սիրունը տերը գտավ.
Ոտարի վատ խոսքերը
Իրենց սրտի մեջ փտավ։

Աշխարհի մեջ տեր ունիմ,
Յարիս վրա սեր ունիմ.
Ճակատը բաց՝ խոսքի տեր,
Ինձի պահող հեր ունիմ։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի



## Ա՛Յ ԱՂՋԻԿ, ԾԱՄՈ՛Վ ԱՂՋԻԿ

Ա՛յ աղջիկ, ծամո՛վ աղջիկ.
Վա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Շաքարից համով աղջիկ.
Ընջավոր, փընջավոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ, համո՛վ աղջիկ։

Ունքերդ խելքըս տարան
Վա՛յ, խելքըս տարան.
Թուխ աչքերդ ծով աղջիկ։
Ընջավոր, փընջավոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ, համո՛վ աղջիկ։

Կապել ես քիրման գոտիկ,
Վա՛յ, քիրմանի գոտիկ,
Մարդ չես թողնում քեզ մոտիկ.
Տեսքով ես, համով, հոտով,
Վա՛յ, համով, հոտով,
Քան ըղծալիկ խորոտիկ։

Գըլուխըդ բարձր բռնի,
Վա՛յ, բարձր բռնի,
Շեկ տղեն քեզի ձեռնի.
Ինձի տան արար աշխարհք,
Վա՛յ, արար աշխարհք.
Յես ուրիշին չեմ առնի։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի
Ս. Բարխուդարյանի

## ԽՈՒՄԱՐ ՊԱՌԿԵ

Խումար պառկե յերես բաց,
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա, դըմբա.
Դեղին կարպետ, բըմբուլ բարձ։
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա, դըմբա՛,
Հե՛յ, հե՛յ, լա՛վն է, հե՛յ, հե՛յ, լա՛վն է։
Հե՛յ, հե՛յ, լա՛վն է, հե՛յ, հե՛յ, լա՛վն է։

Անուշ քընե յերես բաց,
Ծաղակն յեկավ խելքը գընաց։
Հաջոնց բակն եր ղալղըրմա,
Աշնան թոխլին ղավուրմա։

Խարար տարեք ըռեսին.
Աղջիկ բերի վեր մըսին։

Հավարն ընկավ ըռեսին,
Գյադեք թափան վեր մըսին։
Հերոն ուտեր, գիրանար,
Մըկոն խըմեր, ուրխանար։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի



## ԼՈ ԴԱԼԼՈ

Հո՛ դալլո ջա՛ն, հո՛ դալլո ջա՛ն, հոդալլո,
Աղջի՛կ սիրուն, աղջի՛կ անուշ, դալալլո։

Կայնել ես աղբերակին,
Հո՛ դալլո, ջա՛ն, հո՛ դալլո.
Շորը կը տաս արեգակին.
Դա՛լալո, ջա՛ն, դա՛լալլո.
Քո ջող յերեսին մեռնիմ,
Հո՛ դալլո, ջա՛ն, հո՛դալլո.
Անքերին աղեղնակին.
Դա՛լալլո, ջա՛ն, դա՛լալլո։

Մազերըդ ոլորել ա,
Աչքերըդ բոլորել ա.
Յերկ որ ա, չեյի տեսել
Իմ սիրտը մոլորել ա։

Փող ես ուզում, քեզ փող տամ,
Վոսկի տամ, վոչ թե հող տամ,
Թե գըրան էլ հավան չես,
Հոգիս հանեմ, քեզ փոխ տամ։

Յերաժշտ. մշ. Կոմիտասի

## ՁԻ՜ՆՋ ՈՒ ԶԻ՜ՆՋ

Ձի՜նջ ու զի՜նջ տամ լողվորչուն։
Զոմա, զոմա եր։
Ձիմ լաչակ տամ լողվորչուն։
Քոմա, քոմա եր.
Վո՞չ է առ, վո՞չ համնեցավ.
Զոմա, զոմա եր։
Վո՞չ է հան, ծամկալ ծովեն։
Քոմա, քոմա եր։

Ձի՜նջ ու զի՜նջ տամ լողվորչուն։
Ձիմ մեջկապ տամ լողվորչուն։
Վո՞չ է առ, վոչ համնեցավ
Վոչ է հան ծամկալ ծովեն։

Ձի՜նջ ու զի՜նջ տամ լողվորչուն։
Ձիմ շապիկ տամ լողվորչուն։
Վո՞չ է առ, վո՞չ համնեցավ,
Վո՞չ է հան ծամկալ ծովեն։

Ձի՜նջ ու զի՜նջ տամ լողվորչուն։
Լուսնյակ գիշեր պագ մի առվի
Հետ է առ, հետ համնեցավ,
Հետ է հան ծամկալ ծովեր։

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ՀՈՎ ԼԻՆԻ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Ցարխս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ թո՛ղ լինի,
Ցարըս քամարով լինի։
Դե, թըռնե՛ք, թըռնե՛ք, հողը հանենք,
Մեր թշնամու դողը հանենք։

Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Հո՛վ, հո՛վ. հո՛վ լինի.
Մի հատ ես աղջկանց միջին.
Ցարխս տունը ծո՛վ լինի.
Ցա՛ր, ինձ պարզերես արա,
Թո՛ղ, թո՛ղ թո՛ղ լինի,
Իր ընկեր աղոց միջին։
Ցարըս քամարով լինի։
Դե՛, թըռնե՛ք, թըռնե՛ք, հողը հանենք,
Մեր թըշնամու դողը հանենք։

Արի, մի փանդիր խաղանք,
Տնկոց մընանք, չը կաղանք.
Հարսանիքից ալյուրը
Մուղնու ուխտից վաղ աղանք։

Իրար հետ բաղը զընանք,
Ուտենք, խմենք, լինանք.
Թշնամու աչքը հանենք,
Մեր լավ օրից գոհանանք։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

## ԱՂՋԻ ԴՈՒ ՀՈՒՐ ԵՍ

Աղջի դու հուր ես, մուր ես,
Ցես ծարավ եմ, դու ջուր ես.
Ես համբարձման գիշերը,
Քեզ ման կըգամ, դու ու՞ր ես։

Խընձորը գըլորել եմ,
Ճամբիցը մոլորել եմ։
Ցերեք տարի միալար
Քեզ վըրա սովորել եմ։

Ամպաշող լուսնի նըման,
Խաղ ասելով կըգաս ման.
Իմ պայմանը քեզ պահե,
Դու յե՞րբ կըտաս քու պայման։

Սազն առնեմ ձեռըս քոքեմ,
Գամ ձեր դըռանը չոքեմ.
Ըլնի թե ես հընարքով
Քեզ ենդեղից յետ պոկեմ։

Երաժշտ. մշ. Կոմիտասի



## ԽՆՁՈՐ ՈՒՆԻՄ

Խընձոր ունիմ կըծած ա,
Ջորս բոլորն արծաթած ա,
Ափներում մեխակած ա,
Մեջը վոսկով լըցրած ա։

Մերիկս ուզեց, չը տվի,
Հերիկս ուզեց, չը տվի,
Աբերս ուզեց, չը տվի, —
Անուշ յարի ղըրկած ա։

Երաժշտ. մշ. Կոմիտասի

# Ց Ա Ն Կ

## ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՑԵՎ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՑԵՐԳԵՐ


1. Ինտերնացիոնալ . . . . . . . . 7
2. Անվախ ընկեր . . . . . . . . . 9
3. Դու զոհ գնացիր . . . . . . . . 11
4. Գոռ մրրիկները . . . . . . . . 13
5. Ե՛յ մարտիկներ . . . . . . . . 15
6. Դեպի մարտ դիմենք . . . . . . 16
7. Ծովերի, սարերի գրկում . . . . . 17
8. Ցերդ ժողկոմի և նրա ընկերների մասին . . . . . . . . . . . . . 19
9. Բուդյոննու հեծելազորը . . . . . 22
10. Կոմինտերն . . . . . . . . . 24
11. Պատանեկություն . . . . . . . 26
12. Երբ մահանում է ղեկավարը . . . 28
13. Բաքվի 26 կոմիսարների հիշատակին 29
14. Գերմանական հանքագործների երգը 30
15. Գերմանական բանվորների երգը . 31
16. Շտուրմ մարշ . . . . . . . . . 32
17. Հունգարական չախտյորների քայլերգը . . . . . . . . . . . . . 33

18. Շաչյուն ու պայթյուն . . . . . . 34
19. Երգ Կարմիր բանակին . . . . . 36
20. Զարկ թմբուկ . . . . . . . 37
21. Ծովերով . . . . . . . . 38
22. Մեծ մրցություն . . . . . . 39
23. Ես զինվոր եմ . . . . . . . 40
24. Պատանի թմբկահարը . . . . . 41
25. Իմ մատրոս տղա . . . . . . 42
26. Քայլերգ . . . . . . . . 43

## ՆՈՐ ԿԵՆՑԱՂԻ ԵՐԳԵՐ

27. Ծլել է արտս . . . . . . . . 47
28. Արտերը ծլել են . . . . . . . 49
29. Մեր արտերում . . . . . . . 51
30. Մեր բամբակի արտերը . . . . . 52
31. Ջան բամբակ . . . . . . . . 53
32. Աշխարհով մեկ . . . . . . . 54
33. Վերելք . . . . . . . . . 55
34. Մեր կոլխոզի արտերը . . . . . 56
35. Կոլխոզական պարերգ . . . . . 57
36. Կոլխոզական յերգ . . . . . . 59
37. Կոլխոզի աղջիկ . . . . . . . 61
38. Մեր տրակտորը . . . . . . . 62
39. Մենք քարտաշ ենք . . . . . . 63
40. Ձեր թափը . . . . . . . . 64
41. Մեր թափը . . . . . . . . 65
42. Որերի յերգը . . . . . . . . 66
43. Ինչքա՞ն խինդ կա . . . . . . 67
44. Շիրկանալը . . . . . . . . 68
45. Կարբիդի յերգ . . . . . . . 69
46. Երգ կառուցման . . . . . . . 70
47. Ուս-ուսի . . . . . . . . . 71
48. Անմար մնա . . . . . . . . 72
49. Գեղջկուհու յերգերից . . . . . 73
50. Բանակ գնաց . . . . . . . . 74
51. Ես նուռ եմ . . . . . . . . 75
52. Ագրբեյջան . . . . . . . . 76
53. Նոր յերգը . . . . . . . . 78
54. Նորեկ գեղջկուհի . . . . . . 79
55. Որորոցի յերգ . . . . . . . 80
56. Գյուրջի աղջիկ . . . . . . . 82
57. Խորհրդային գարուն . . . . . 83
58. Մաշինեն քաշել եմ վարի . . . . 84
59. Տրակտոր . . . . . . . . . 85

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

60. Բելեր, ցոլեր . . . . . . . 89
61. Բելե, քելե . . . . . . . . 91
62. Ես տռուն . . . . . . . . 92
63. Գարուն ա . . . . . . . . 93
64. Հաբրբան . . . . . . . . 94
65. Կաքավլի յերգը . . . . . . . 96
66. Զինար ես . . . . . . . . 97
67. Ալագյազ . . . . . . . . . 98
68. Խնկի ծառ . . . . . . . . 99
69. Կուժն առա . . . . . . . . 100

70. Ցերկինքն ամպել է . . . . . . . 101
71. Ձեմ կրնա . . . . . . . . . 102
72. Վարդ կոշիկս . . . . . . . . 103
73. Արի մանան . . . . . . . . 105
74. Հո՛յ, նազան իմ . . . . . . . 106
75. Ալագյազ . . . . . . . . . 108
76. Քյուրդան կըղի . . . . . . . 109
77. Ծամթել . . . . . . . . . 110
78. Հո՛վ արեք . . . . . . . . 112
79. Թը՛խ կոնդա . . . . . . . . 113
80. Մանդրիկ թխիկ ըռեհան . . . . 114
81. Կայնել ես . . . . . . . . . 115
82. Սար, սար . . . . . . . . . 116
83. Մատնիքը մատուխ չէր . . . . . 117
84. Սարերի վրով գնաց . . . . . . 118
85. Ես գիշեր լուսը տեսա . . . . . 119
86. Լուսնակն ա կայնել պարին . . . 120
87. Իմ չինարի յարը . . . . . . . 122
88. Լուսնակն անուշ . . . . . . . 123
89. Արաղը հեշտացել ա . . . . . . 124
90. Անձրևն յեկավ . . . . . . . 125
91. Ես գիշեր, լուսնակ գիշեր . . . . 126
92. Առնեմ երթամ են սարը . . . . . 127
93. Գարուն ա, ձուն ա արել . . . . 128
94. Ցես սարեն կու գայի . . . . . . 129
95. Եսոր նորը նորել է . . . . . . 130
96. Գացի արտերը . . . . . . . . 131
97. Շողեր ջան . . . . . . . . . 132
98. Կայնել եմ՝ գալ չեմ կարող . . . 133
99. Ամպել ա, ձյուն չի գալի . . . . 134
100. Ցես աղջիկ եմ . . . . . . . . 135
101. Սախորն ուսին դրի . . . . . . 136
102. Ա՛յ աղջիկ, ծամով աղջիկ . . . . 137
103. Խումար պառկե . . . . . . . . 138
104. Հո դալլը . . . . . . . . . 139
105. Զի՞նչ ու գի՞նչ . . . . . . . 140
106. Հով լինի . . . . . . . . . 141
107. Աղջի դու հուր ես . . . . . . 142
108. Խնձոր ունիմ . . . . . . . . 143

125

ՀՀ Ազգային գրադարան

NL0350284

72.995